



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

440

№ 11

5535

ՀԱՐԻԲ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՅ

(ԱՐՏԱՏՊԱԾ «ԴՐՕՇԱԿ»-ԻՑ)

Ա. ԳՐՔՈՅԿ

(Երկրորդ տպագրութիւն)

12-11-19

Գրքն է 30 սանտ., 10 րոպ., 2 րոպ.

Ժ Ը Ն Ե Վ

ԱՆԱՅՑՈՒԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1903

891.99
W-42

Արևիկա

891.99

Ա-42

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ

сбзначенного здесь срока

2260

ԽԱՅԸ. — ԳԱՏԻԸ. — ԷԼ ՄԻ ԱՂՕԹԻՐ. —

— ՄԱՅՐԸ. — ԱՐԻԻՆՈՑ ԹԹԽՍՈՐ

4440



4440

+ 0225

93661-42



2260 +

„Խ Ա Յ Ը“

(ՆԱԽՕՅՈՒ ՅՈՇԱՏԱԿԻՆՆ)

Յուրտ էր, ձմեռ, բուր-բորան. գիշերն էլ այնքան
 խաւար էր, այնպէս սարսափելի, որ լեռնային Օ...
 գիւղում մարդիկ այդ ժամին էլ չէին յիշում, թէ իրենք
 երբ և իցէ որ ու արև, լոյս ու ջերմութիւն, պարզ
 երկինք տեսնէ են, թէ ոչ: Քամի էլ կար, բայց ինչ
 քամի, ասես թէ մահու աշխարհից էր փչում, որ իր
 վըզվըզոցի մէջ ինչ որ սարսուռ ազդող, չարագուշակ
 բան ունէր. ձիւնի հետ խաղում էր, բայց այդ խաղը
 դիւական էր. լիզում էր առարկաները, բայց իր շունչը
 մահացու էր: Խօս մենակ մարդիկ չէին, որ մտում էին,
 այլ ամբողջ Օ... գիւղը ասես իր բոլոր խրճիթներով,
 իր խոտի դէզերով, իր աթարի կոյթերով դողում, սըրթ-
 սըրթում էր այդ թանձր խաւարի մէջ, այդ դժոխային
 քամու առաջ, և դժար էր գիտենալ, թէ այդ դողը
 միայն ցրտի՞, թէ՞ նաև երկիւղի դող է: Ախր գիւղը
 վախենում է բնութիւնից, և ինչպէս է վախենում,
 նա սարսափում է. ամպրոպն ու կայծակը, քամին ու
 փոթորիկը նրա համար խօս բնութեան անմիտ, ան-
 խորհուրդ խաղեր չեն, հապա նրանք գալիս են որոշ
 զարհուրելի նպատակներով. այդ գիտէ գիւղացին, ինչպէս

չդողայ: Դեռ լաւ որ կայծակի դէմ՝ խաչի նշանը կայ, իսկ բուք-բորանի դէմ՝ տաք գոմը կայ, սաքուն կայ:

Վճ, վճ, վճ, — ոռնում էր քամին և ամէն անգամ այդ զարհուրելի կաղկանձոցի հետ Մէլիք-Շահինի սաքուի երկու կողմի բազմականները դադարում էին խօսելուց, ցած էին առնում բերաններից չիբուխները, իրար երես էին նայում և նոյն իսկ մի ներքին պահանջ զգում իրար աւելի մօտ գալու, աւելի կուչ գալու: Տէր Ասուած, ձիւնը լաւ, ցուրտն էլ իր տեղին, բայց այդ քամին, ի՞նչ էր ուղում այդ սարսափելի քամին, այն ի՞նչ էր ասում: Ոչ ոք չէր համարձակում բարձրաձայն բացատրել այդ ահաւոր տարերքի լեզուն, բայց ամէնքն էլ լաւ հասկանում էին. դա ամէն մէկի համար ճակատագրի հսկայական երգն էր, որ քամին, այդ յաւիտենական ուխտաւորը, հիւսել է աշխարհի ցաւերից, թոյլի հառաջանքից, անգորի ճիչից, թշառի լացից, խեղճի աղբսից. ո՛չ մի ցաւոտ հնչիւն չի մեռել անսահմանութեան մէջ. ամէնամեղմ, սրտաձմիկ մրմունջներից սկսած մինչև լեռնադղորդ գոչիւնները, իբրև հաւատարիմ աւանդապահ հաւաքել է քամին իր եթերային ծոցում, և մերթ շրթայում է բարձրագոյն լեռների կատարներին ու լայնածաւալ խաւար այրերի մէջ, մերթ բաց է թողնում, որ ցած գան, հնչեն աշխարհի վրայ, ցաւոտ ու սպառնալից ձայներ հանեն, խօսեն մարդկանց սարսափած ականջներում անխուսափելի ճակատագրից... Այդպէս էին մտածում սաքուի մէջ սարսափած գեղջուկ գլուխները: Ահա թէ ինչու քամու որոտը իւրաքանչիւրի համար մի զարհուրելի համբոգ էր, որի մէջ կար և՛ մեռելների հառաչ, և՛ սատանաների ճիչ, անձոռնի կանչըւոտոց, և՛ քաղցած

գայլի ոռնոց. չէ՞ որ սրանք ամէնքն էլ սիրում են բուք-բորանին դուրս թափել իրենց ապաստարաններից՝ բնութիւնն աւելի սարսափելի դարձնելու համար իրենց անձոռնի աղաղակներով: Օ՛, ի՛նչ աղաղակներ, մաղբ էին դիզանում, լեզու էր չորանում, շունչ էր բռնուում:

Վճ, վճ, վճ, ը՛ղզ. . . Քամին է՛լ աւելի սաստկացաւ, սաքուի կտուրն այժմ ճռճում էր, երբեմն էլ ասես թէ մէկը ոտքով էր թակում:

— Ա՛հ, դժոխք է դուրսը, ասաց նստողներից մէկը խօսած լինելու համար. դուշմանս հիմա սարում չլինի:

— Սարում, պատասխանեց մի ուրիշը հեգնութեամբ. սաքի թէ դու ջան կ'անես հիմա մինչև մեր այգիները գնալ, որ սարերից ես խօսում. չի՞ս լսում ձայները... երկինք-գետինք իրար է դիպել է՛հ... . .

Կրկին լուութիւն տիրեց. խօսել չէր լինում, մտածելու շատ բան կար:

Գոմի դուռը հանդարտ ճռուաց. ամէնքը դէպի այն կողմը նայեցին. կիսախաւարի մէջ գծագրուեց մի մարդու հասակ, որ ետփուռնու մէջ կոլուրած ներկայացնում էր մի ձիւնակոյտ. պարզ էր, որ մարդը երկար ժամանակ բքի տակ էր մնացել:

— Բարի երեկոյ, ասաց նորեկը, թափ տալով ետփուռնու վրայի ձեան հաստ շերտը:

— Աստծոյ բարին, վայ խեղճ խայ, արի՛, արի՛, առաջ անցիր, տնաշէն, փէտացար — ձայն տւին այս ու այն կողմից նստողները սրտացաւ եղանակով — խային տեղ տւէք թող նստի:

— Հա՛, վալլահ փէտացայ, ասաց նորեկն առաջանալով, էլ դուրսը մնալու ճար չկայ, ասես թէ երկինքը փուլ է գալիս, գիւղի մէջ էլ մարդ խեղդուում է. ձիւն ու

քամի. օ՛, ի՛նչ բուք է, ի՛նչ բուք է. ասացի մտնեմ սաքուն, տաքանամ, դուրս ելնեմ:

Մարդը նստեց.

Բուխարու վերև, փոքրիկ, մրոտ ակնատի մէջ՝ հասնդարտ պլպլում էր ձէթի ճրագը. նրա աղօտ բոցն օրօրում, գողգողում էր դանդաղութեամբ, ասես թէ նա էլ էր վախենում քամու վզվզոցից, բայց էլի մի խղճուկ լոյս կար, այնքան, որ թանձր փափախների ստեղծների տակ մի քանի դէմքեր գծագրում էին. նորեկի վրայ էլ ընկան մի քանի գողգողուն, գեղնագոյն շողեր: Գեղընուկ մի դէմք էր այն, ուր չարքաշ կեանքը գրե՛լ էր իր կոշտութեան կնիքը, իսկ ցաւերը բուն էին դրել հաստ կաշւի խոշոր ծալքերի մէջ. երիտասարդ մարդ էր, բայց երևում էր, որ շատ էր ապրել. թանձր բեխերի տակ երևում էին երկու հաստ շրթունքները պինդ իրար վրայ սղմած, որ տալիս էին նրա դէմքին յամառ արտայայտութիւն. աչքերը մանր էին, բայց շարժուն, կրակոտ: Գիւղի պահապանն էր նա, վարձած գիշերապահը: «Խայ» — էր շատ կային Օ. . . գիւղում, գնացին. այս մէկը մնաց ուշացած կռունկի պէս. մուրալ չուկեց, պահապան եղաւ. տեղացիք անունը լաւ չգիտէին, նախօ կանչելու տեղ՝ ոմանք Միսօ կանչեցին, ոմանք էլ Մկօ ասացին, բայց վերջիվերջո՛յ՝ խօսքերը կարծես մէկ բառ՝ սկսեցին պարզապէս «խայ» կանչել: Այսպէս լաւ էր, հեշտ էր. համ էլ՝ իրաւ որ նա «խայ» էր, որովհետև հայաստանցի էր, Ոզմ՝ գիւղացի: Ահա այս «խայն» էր, որ մի անկիւնում պատի տակ տեղ գրաւեց, կծկեց, տաղ արեց. սաքուն տաք էր:

Բուքը շարունակում էր. կատաղել քամին վերաւոր գաղանի պէս մոնչում, ոռնում էր:

— Այսպիսի դիշերւայ է ուստ եկել խեղճ ողորմելին հա՛ — ասաց ռէս Գէվօն — էլ ի՛նչ հողը տար գլխին:

Խօսքը մի գիւղացու մասին էր, որ մի քանի օր առաջ լեռներում ըբի բունելով՝ խեղդուել էր:

— Քանի՛ ստինք մի՛ գնա, էս ձիւն ու ձմրանը չօլերը մի՛ ընկիր, կնիկ, երեխայի տէր ես, — վրայ բերեց միւսը:

— Է՛, ի՛նչ ես անգէտ անգէտ խօսում, մարդի ճակատին էն էր գրւած, ասաց Մէլիքը. նա պիտի գնար, նա պիտի խեղդուէր. ճակատագրից ո՛վ կարող է փախչել:

— Իրա՛ւ, իրա՛ւ, Մէլիք, ասացին մի քանի հօգի, ճակատի գրածը չի ջնջի:

Ճակատագիր, ամէնազօր ճակատագիր. . . Գիշերւայ այս դարհուրելի ժամին, կիսախաւար, գետնափոր սաքում, քամու այս անձոռնի գոռոցի տակ, որ սարսափելի բաներ էր պատմում այդ կոյր զօրութեան մասին, դժւար էր խօսակցութեան աւելի յարմար նիւթ գտնել: Իւրաքանչիւրն իր դիտողութիւններն արեց այդ մասին. ամէնքն էլ հասան այն եղբակացութեան, որ մարդը խաղալիք է ճակատագրի քմահաճոյքին, որ նրա առաջ անզօր են մարդկային բոլոր հնարքները, նրա բոլոր խելքը, եռանդը, աշխատանքը:

— Ես ճակատագրին չեմ հաւատում, ասաց մի ձայն սաքուի մի անկիւնից:

— Ամէնքի հայեացքները դարձան դէպի այն կողմ. . . Ջարմանքն ընդհանուր էր:

— Ո՞վ է այդ «աժդահան», ասաց Մէլիքը հեգնութեամբ:

— Ծառա՛գ եմ, ես եմ, Մէլիք. ես ճակատագրին չեմ հաւատում, կրկնեց նոյն ձայնը յամառութեամբ:

Մարդիկ չգիտէին ծիծաղէն, թէ զայրանան. ճակա-

տագրի ամէնակարող ուժին չհաւատացողը ողորմելի
„խայն“ էր:

— „Է՞ծերի քոսոտը կը կատարի“, սուտ չէ ասած,
մրմուռաց Մէլիքը կէս հեգնութեամբ, կէս բարկացած.
Իսկապէս ամէնքն էլ զայրացած էին. և ինչպէս չզայրա-
նային. Մէլիքը, հարուստ, զօրեղ Մէլիքը՝ հաւատում էր
ճակատագրին, վախենում էր նրանից. ու էս Գեղօն, որի
ճիպոտի առաջ բոլորը դողում էին ինչպէս ուռի տե-
րեւներ, սարսափում էր ճակատագրից. տէրտէրը խօ-
րինչ քարոզէր, վերջը ճակատագիրն էր. ամէնքն էլ ընկ-
ճըւած էին այդ աներևոյթ զօրութեան առաջ, ամէնքն
էլ սոսկում էին նրանից, մէկ այս ողորմելի, քնձոտ
„խայր“՝ ճակատագրին չէր հաւատում, չէր վախենում
նրանից:

— Այո՛, ես չեմ հաւատում այդ ձեր ճակատագրին,
կրկնեց „խայն“ — այս անգամ աւելի կտրուկ, աւելի յան-
դուգն ձայնով, երբ տեսաւ իր վոյ ուղղւած արհամար-
հական հայեացքները, — և ես ձեզ հէնց այս բոպէիս
կարող էի ցոյց տալ, որ իրաւունք ունիմ, բայց փաստ,
որ պիտի դուրս գնամ գիւղը շրջելու: Եւ նա վեր կացաւ,
պատրաստելով դուրս գնալ:

— Մնա՛, մնա՛, „խայն“, գոռացին մի քանի ձայներ՝
հետաքրքրւած. ու է՛ն, ասա թող մնայ. հիմա գիւղը
չթալանեցին:

Ռէսի ցանկութեամբ „խայր“ կրկին նստեց իր տեղը:
Ամէնքի հայեացքները դէպի նա դարձան, ամէնքը սպա-
սում էին, թէ ինչ պիտի պատմի այս մարդը, որ այդ-
պէս յանդուգն յամառութեամբ արհամարհում է ճա-
կատագիրը:

— Էն տարին — այսպէս սկսեց „խայր“ — տաս հոգի

էինք, տասը գժեր, տասը բոց ու կրակ ունէինք կըրծ-
քերիս տակ, միատեսակ կրակ, միւսնոյն կայծից բռնկւած,
որ վառում, փոթոթում էր մեզ: Միատեսակ անվախ
սիրտ ունէինք, բայց ինչ սիրտ... Դա ճոյլ էր, վշտերով
ալեկոծ, ամօթից կապտած, դա խարոյկ էր՝ վրէժով
վառւած... Ամիսներ էր, ինչ թափառում էինք ջօլից՝ ջօլ
սարից՝ սար, ձորից՝ ձոր. օձերի հետ էինք ջուր խմում,
քարէ անկողնի մէջ բոպէներով հանգիստ առնում: Դէ,
ինչ անէինք. շատ երկար կուլ տւինք մեր անարգանքը.
համբերութիւններս ահագին էր, բայց մեր դուշմանի
անասուածութիւնը, նրա անսիրտ անամօթութիւնը ան-
սահման էր. էլ ապրել չէր լինում, հաց չկար, եղածն
էլ կուլ չէր գնում, թոյն ու լեղի էր դարձել. Մենք էլ
ամէն բան թողինք, տուն ու ընտանիք, մալ ու միւլք
և մեր պատուի թուք ու մուրը սրբելու համար մի մի
հրացան առանք, սարերն ընկանք: Այսպէս լաւ էր...
ազատ էինք... Օ՛, երբ մարդ այնպիսի ցաւեր ունի, ինչ-
պիսին մերն էր. երբ մարդու քոյրն ու մայրն է վերա-
ւորւած, երբ զաւակն է սպանւած, երբ ծերունի հայրն
է անարգւած, — այն ժամանակ էլ աշխարհում ոչինչ,
ոչինչ չի կարող նրան մխիթարել. կուրծքը եռում, բոր-
բոքում է բոցերի մէջ. արցունքն անդոր է զովացնել
նրան. սփոփիչ խօսքերը ծաղր ու ծանակ են... բայց երբ
մարդ սղմում է կրծքին հրացանի տաք փողը պի՛նդ,
պի՛նդ, երբ մարդ տեսնում է, թէ ինչպէս է նա մահ
որձկում արիւնապարտ թշնամու գլխին, այդ ժամանակ,
օ՛, միայն այդ ժամանակ՝ մարդու սիրտը հովանում է,
հոգին հանգստանում, ամօթից էլ չի կարմրում երեսը,
զգում է, որ ինքն էլ մարդ է, փափախ ունի գլխին,
պատիւ ունի...

Քիւրդերն ու թիւրքերը մեզ ասում էին «Ֆէդայի», իսկ հայերն ասում էին «վրիժառու ոգիներ»։ Մեր առջևից սարսափն էր գնում, մեր յետևում մահն էր փուռում։ Սարբերի միակ տէրը մնացինք մենք ու արծիւնները. մի քիչ նման էլ էինք իրար. միատեսակ էինք յարձակւում մեր որսերի վրայ։ Քանի տեղ հասանք, քանի գազան թիւրքի ու քիւրդի զգեցի մուրազը փորումը թողինք։ Շատ անգամ մեզ փնտռում էին, բայց մենք դարձել էինք աներևոյթ դեեր, ամէն տեղ էինք և ոչ մի տեղ. Ֆէդայիին գտնելը հեշտ չէր, հանդիպելն էլ դարձուրելի։ Այսպէս էինք մենք, և սպասում էինք մեր ճակատագրին. մենք հաւատում էինք նրան։ Մի օր Սիմ լեռան կատարին էինք, որ մեր պաշարը վերջացաւ։ Ինձ վիճակեց պաշարի գնալ։ Ես գիւղերը ճանաչում էի. բայց շէն էին, թէ՞ աւերակ, բնակիչներ կա՞րին, թէ՞ դաղթել էին, — այդ ես չգիտէի. ինչ և լինէր, պիտի գնայի, ինչպէս լինէր, պիտի պաշար ճարէի։ Ես ցած իջայ մեր որջից օրը ցերեկով, առանց զէնքի, առանց նոյնիսկ ձեռնափայտի. մտածում էի, թէ թշնամու չեմ պատահի, եթէ պատահեմ էլ, անզէն լինելս գուցէ ինձ փրկի. իսկ եթէ չեմ փրկւի երևի ճակատագիրս այդպէս է։ Եւ այսպէս ես գնում էի... Բաւական ժամանակ շուրջս մեռելու թիւն էր, ոչ ոք չկար. առջևս մի սար էր, պէտք էր բարձրանալ և ապա վար իջնել յաջորդ ձորը։ Բարձրացայ, հէնց կատարին առջևս ցցեց մի քիւրդ, մի համիդիէ, ոտից դուրս զինւած։

- Բարև քիւրվա՛ ասացի ես անհոգ եղանակով։
- Բարև Ֆլա՛, պատասխանեց քիւրդը, բայց չանցաւ, կանք առաւ՝ նայեց ինձ։
- Ես կանգ չառայ, այլ առաջ անցայ, շարունակեցի

ճանապարհս. բայց զգում էի, որ քիւրդը տակաւին կանգնած հետևում է ինձ հայեացքով։ Ես չէի շտապում՝ կասկածի առիթ չտալու համար։

— Հէ՛յ, Ֆլա՛, կայ, կայ, լսեցի յանկարծ քիւրդի ձայնը. յետ նայեցի, կանգ առայ։ Ճակատագիրս է, մտածեցի ես, և ճիշդ որ՝ ճակատագիրը հէնց այս քիւրդի կերպարանքը կարող էր ունենալ. հրացանն ուսին, կեռ թուրը կողքին, սպիտակ փղոսկրէ կոթով մի դաշոյն գօտիկը խրած, դէմքը զգեցի, աչքերը կատաղի՝ իսկ և իսկ քաղցած դայլի աչքեր։ Նա մտեցաւ ինձ։

— Էս օրերում, էս տեղերում ոչ մի Ֆլա սիրտ չէր անի երևալ ասաց քիւրդը. դու բարի պտուղ չես երևում. ո՞վ ես, ո՞ր ես գնում։

— Քիւրդ, ասացի, ժամանակները վատացել են, բայց մի՛ ժողացիր, որ մենք հարևաններ ենք. քեզ իբր հարևանի ասում եմ, որ ես խուժեցի եմ, մեր կողմերում սով է, այդ խօսմ գիտես. Գերջան եմ գնում երեսաներիս համար մի քիչ հաց ճարեմ. թող ինձ հանգիստ անցնեմ, գնամ։

— Չէ՛, Ֆլա՛, խաբել չես կարող ինձ, դու բարի պտուղ չես։

— Քիւրդ, Աստուած ունես, ինչպէս տեսնում ես՝ վրաս զէնք չունեմ, գրպանումս դանակ չկայ. թէ գազան էլ դառնամ, երկու ձեռքով ի՞նչ կարող եմ անել աղաչում եմ քեզ, թող անցնեմ, գնամ։

— Առաջ անցիր, քեզ գայմագամին պիտի տանեմ։ Գայմագամին... Այս արդէն սարսափելի էր, որովհետև մեզ վաղուց փնտռում էին։

— Քիւրդ, գայմագամին մի՛ տար ինձ. թէև գրանից իմ անձին վնաս չկայ, բայց կ'ուշանամ, երեսաներս

մեղք են, սովեց կը մեռնեն. Աստծու սիրուն, քիւրդ, բրա՛, քիրվա՛, թող ինձ երթամ. . .

Քիւրդն անողոք մնաց: Ճակատագիրս է, մտածեցի ես, և գլուխս քաշ արած, առաջ անցայ: Ի՞նչ կարող էի անել. ուժը նրանն էր, հրացանը՝ նրա ուսին էր, դաշոյնը՝ նրա գօտկումն էր, թուրը՝ նրա կողքին. ի՞նչ անէի երկու ձեռքով: Ճակատագիրս էր: Գնացիք:

Շուրջս ամէն բան գեղեցիկ էր. արևը պայծառ, երկինքը պարզ, լեռները կանաչ, ծաղիկներն անուշահոտ, օդը թռչուններով լի, ամէն կողմ կեանք, ենդուութիւն: Ախր, շատ վերև՝ օդի մէջ ճախրում էր մի արագիւլ, աղատ, համարձակ: Ես չգիտեմ ինչու իմ վիճակի բոլոր սարսափը մոռացած, նայում էի այդ թռչունին, անթարթ, երկաթ: Նախանձում էի արդեօք, թէ ուրիշ մի բան կար, որ գրաւում էր ինձ, ես այդ չգիտէի, բայց նայում էի: Երկար ճախրում էր արագիւլը. մէկ էլ յանկարծ սկսեց պտոյտներ անելով դէպի վար իջնել և շեշտակի թափով ձգեց իրեն մեզանից շատ մօտիկ մի բլրի վրայ: Ես հետևում էի. այնտեղ մի մեծ օձ կար, որին նշմարել էր արագիւլը: Թռչնի թևերի շփշփոցից սողունը կծկեց, գլուխը թագցրեց մարմնի օղակների տակ: Սկսեց մի սարսափելի կռիւ: Մենք երկսով էլ կանգ առանք:

— Տեսնո՞ւմ ես, ասաց քիւրդը, Ֆլան որ կայ՝ օձ է, այսպէս պէտք է ջախջախել նրան:

Ես պատասխան չունէի. ես դիտում էի: Արագիւլն իջնում էր, կտցով հարւածում օձին և վրայից անցնում, այդ ժամանակից օգտւելով՝ օձն աշխատում էր փախչել բայց հազիւ մի քանի օղակ արած, սարսափելի թշնամին սաւառնում էր նրա գլխին, օձը կրկին կրծ-

կում էր, կրկին ծածկում իր գլուխը: Իրաւունք ունէր քիւրդը. իմ և օձի վիճակի մէջ մեծ նմանութիւն կար: Օձի էլ ճակատագիրը հասել է, էլ փրկութիւն չունի, մտածեցի ես: Այս միտքը նոյնիսկ ինձ մի փոքր մխիթարում էր: Կամաց կամաց արագիւլն աւելի յանդըզնեցաւ, հարւածներն աւելի յաճախ և մահացու դարձան, վերջիվերջոյ օձին արդէն բաւական թուլացած համարելով՝ նա ցած իջաւ նրա կողքին և արդէն շուրջ քայլելով՝ երկար կտցով վերջին հարւածներն էր տալիս: Օձը շարունակում էր գլուխը թագցրած պահել, շարունակում էր ըստ երևոյթին թոյլ թոյլ պաշտպանել: Արագիւլը խիստ մօտ էր նրան այժմ: Մէկ էլ յանկարծ մի զարմանալի բան պատահեց: Այդ կիսամեռ սողունը վերջին ճիգերը հաւաքեց, դուրս հանեց գլուխը, բացեց իր օղակները, պոչի վրայ ցցեց, ձգեց ինչպէս մի խարազան և մահացու օղակներով արագիւլի երկար վզին փաթաթւեց: Իզուր անցան արագիւլի բոլոր ջանքերը դուրս կորզելու իր վիզը այդ մահաբեր օղակներին. նա թևերը թափթափ էր տալիս, կտուցը գեանին քսում, յետ յետ էր քաշւում, առաջ անցնում, գեանին թաւալւում, փորձում էր վեր բարձրանալ թռչել փախչել—այպարդիւն ջանքեր. . . Օձի յուսահատ կատաղութիւնը զարհուրելի էր. նրա օղակները սղմում էին ու սղմում, և վերջիվերջոյ թռչունը փուկեց բլրի կրծքին անկենդան. . . Օձը քաշեց, անյայտացաւ:

Քիւրդը լուռ էր այժմ: Նա ինձ նայեց, մեր աչքերն իրար հանդիպեցան և մի քանի վայրկեան մենք անկարող եղանք հեռացնել իրարից մեր հայեացքները: Մեզանից իւրաքանչիւրն աշխատում էր հասկանալ թէ ի՞նչ է մտածում իր հակառակորդը այդ բոլորէին: Ո՛չ

մի կասկած չկար, որ երկսիս գանգերի մէջ եռացող մտքերն էլ միմեանց վերաբերմամբ ահաւոր էին: Այդ մենք հասկանում էինք, կարգում էինք իրար աչքերում փոխադարձաբար. չէ՞ որ աչքերը մտքի ահամայ դաւաճաններն են: Ես հասկացայ, որ այդ գազանը օձի անակնկալ յաղթանակով կատաղած, որոշել է ինձ սպանել, Այդ ես շատ լաւ կարդացի նրա աչքերում, որոնց արտայայտութիւնը այժմ աւելի չարագուշակ էր. օ՛, ես ճանաչում էի քիւրդի աչքերը: Բայց ես էլ էի մտածում: Օձի և արագիլի կռիւը իմ մէջ էլ մի փոփոխութիւն առաջ բերեց: Ես դեռ երբէք չէի լսել, թէ օձը արագիլին կարող է խեղդել. յայտնի է, որ արագիլն է օձի մահաբեր թշնամին, նրա մարմնացած ճակատագիրը. այդ ինչպէս պատահեց, որ այսօր այդ ճակատագիրը սխալ դուրս եկաւ: Աստուծ, որ չի թող տալիս, որ օձի նման զգեւի սողունն անգամ անարդար զոհ դառնայ արագիլին, նոյն Աստուծը մի՞թէ՞ պիտի թող տայ որ այս քիւրդը, օձից տասն անգամ զգեւի այս արարածը՝ իմ ճակատագիրս տնօրինի: 2է՛, ճակատագիրը սխալ է, մտածեցի ես. . . պիտի ճար տեսնել:

Եւ ես սկսեցի մտածել, երկար, երկար. . . Հնարք էի փնտռում. բայց ի՞նչ հնարք. գոնէ մի դանակ էլ չունէի: Այդ ընդհանր աչքս ընկաւ քիւրդի այն սիրուն դաշոյնին, որ խրել էր իր գօտին. . . — Ա՛խ, գոնէ այն իմ ձեռքում լինէր, միայն այն:

— Գնա՛, որոտաց քիւրդը. ի՞նչ ես կանգնել:

Ես շարժեցի. մենք մտանք մի ձոր, խուչ ամալի ձոր: Քիւրդն սկսեց իր շուրջը նայել. նրա շարժումները անհանգիստ էին. երևի չարագործն էլ իր անմեղ զոհի առաջ վճռական ընդհանրութիւն մի փոքր դողալ գիտէ:

Նա յաճախակի ցած էր առնում հրացանն ուսից, կրկին ուսն էր ձգում: Ես զգացի, որ մօտ է վախճանս, բայց ես այլևս չէի ուզում մեռնել. երբ օձն ապրելու իրաւունք ունի, մարդը, այն էլ հայ-քրիստոնեան չի կարող այդ իրաւունքից զոհուած լինել: Ես կամաց-կամաց քայլերս նւաղեցրի: Ես անելիք ունէի. ինձ համար անհրաժեշտ էր, որ քիւրդի առջևը չլինեմ. դա վտանգաւոր էր:

— Շո՛ւտ, շուտ գնա՛, շտապեցնում էր քիւրդը: Նա աշխատում էր անդադար, որ ես իր առջևը լինեմ. այդ ես գիտէի. իսկ ես աշխատում էի նրա հետ հաւասար գծով ընթանալ:

Կարծես թէ մենք հասկանում էինք իրար. մենք լուռ կուռում էինք. կեանքի մահու կռիւ, որ ահաւոր էր մանաւանդ իր դաւաճան խորհրդաւորութեամբ. . .

Ես կանգ առայ յանկարծ. պէտք էր օրեկիս թելը պնդացնել: Քիւրդը հասաւ ինձ, կանգ առաւ: Ես առանց գլուխս բարձրացնելու վարից դիտեցի նրա դիրքը. նա իմ աջ կողմում էր ցցւած. դաշոյնի սպիտակ կոթը երևում էր գօտի միջից:

— Շո՛ւտ արա՛, պրծի՛, ֆլա՛, կոչեց նա զայրացած, տեսնելով իմ դանդաղութիւնը:

Ես յանկարծ գլուխս բարձրացրի, քրդի գօտից վայրկենապէս դուրս քաշեցի դաշոյնը, և մինչև որ նա ապշած ու սարսափած պաշտպանելու որ և է փորձ կ'անէր, փայլուն դաշոյնը մինչև կոթը ահագին թափով նրա կուրծքը մխեցի: Այրենին ոռնաց և գետին զլորեց. . . Ես փրկւած էի Ահա այն փրկարար դաշոյնը. . .

»Խայը« դուրս քաշեց իր գօտուց մի փղոսկրէ կոթով դաշոյն ու դրեց բազմականների առաջ: Ճրագի առաջ փայլուն պողպատը պաղ պաղ փայլ էր արձակում: Ամէնքը

ծնկների վրայ ընկած, լուռ դիտում էին այդ ահաւոր գործիքը, որ մարդկային անզօր ձեռներում լուծել էր ճակատագրի բարդ հանգույցը: Փոքրիկ, կորած, ողորմելի «խայր» հսկայ դարձաւ ամէնքի աչքին. նա «աժդահա» էր, նա իշխում էր իր ճակատագրի վրայ, ծաղրում էր իր բախտը: Նա իրաւունք ունէր:

— Ես ճակատագրին չեմ հաւատում, կրկնեց այս անգամ «խայր» վեհ յամառութեամբ, բայց այդ բաներն այս անգամ ծիծաղու զայրոյթ չառաջացրին, այլ պատկառանք և մտքեր, մտքեր, փրկարար մտքեր, ազատիչ մտքեր, սրբազան խորհուրդներ:

«խայր» վերցրեց իր դաշոյնը, գօտիկը խրեց, դուրս գնաց գոմի դռնից, բազմականները մնացին լուռ...


Դրսում քամին շարունակում էր ոռնալ, բայց նա այլևս չէր խօսում ճակատագրի հզօր ուժից: Քամու բազմազան աղաղակների մէջ մարդիկ այժմ որոշում էին ձայներ, որոնք անվերջ «վրէժ», «վրէժ» էին ազաղակում: . .



(ՆՄԱՐԱԳԵՏ ՄԻՔՈՅՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Շատախը ցնցած էր: Լեռնէ լեռ, ձորէ ձոր Միքոյի անունն էր հնչում: Նա իր ընկերներով բուն էր դրել ժայռոտ բարձունքների վրայ և իր սարսափը սփռել ամէն տեղ: Թշնամիների համար դա մի առիւծ էր, որ յանկարծ դուրս էր պրծել երկաթեայ վանդակից և իր կրած ստրկութեան վրէժն էր պահանջում: Խաղաղութիւնը վրդովւած էր Շատախում: Քիւրդ ու թիւրք դողում էին. հայ գիւղերի պատուհաս Շաքիրը իր սեփական բնակարանի մէջ սոսկում էր նրա անունից և ի վերջոյ ճարը կտրած՝ գլուխն առնում կորչում: Հայերն օրհնում էին քաջին, աղօթում նրա կեանքի համար, բայց քիչ չէին և այնպիսիները, որոնք անէծք էին թափում իրենց բարերարի գլխին. հիւանդ երեխան էրը չի անիծել բժշկին. ստրկական անզգայութիւնը հանգստի, խաղաղութեան սիրահար է. քոն, միայն քոն — ի՛նչ փոյթ, որ այդ քոնը մահաբեր է: Բայց ոչ որ այնպէս չէր անիծում Միքոյին, ինչպէս Բ. . . եցի Հայրօն:

Հայրօն չափազանց գոհ էր իր վիճակից. գոմում երկու լուծ հաստավոր եզներ և մի քանի կթան, դաշ-



տում լաւ վարելահողեր, որ իր ձեռքով մշակում էր: Ինքն էր, իր քայրը և ծերունի հայրն ու մայրը — խաղաղ, սիրով ապրում էին: Ճշմարիտ է, վարուցանքի կիսից աւելին քրդերն էին տանում, շատ էր աշխատում քիչ վայելում, բայց էլի մնացածը բաւական էր մի կերպ ապրելու համար — էլ ի՞նչ հոգս... Ասում էին, որ քիւրդերը հայ աղջիկ են փախցրել որ զափթիկները հարեանի տանը գիշերել և վերաւորել են կնոջ պատիւը, որ ուսի հարսին համբուրել է բէզը և այլն և այլն: Բայց այդ բոլորը Հայրօյին շատ քիչ էր հետաքրքրում. իրենք դեռ խաղաղ էին, Նազօյին ոչ որ մինչև այժմ չէր ասել թէ աչքիդ վերեւը յօնք կայ — էլ ի՞նչ դարդ, ի՞նչ հոգս. ո՞վ է մեղաւոր, որ ուրիշները լաւ չեն նայում իրենց ընտանիքին. զափթիկն տուն եկաւ թող ընտանիքը գիշերը տանից հեռացնեն. իհարկէ, որ տանը մնան, զափթիկն էլ վատութիւն կ'անի, բէզն է կը համբուրի. դէ՛ նրանք անօրէն են, անօրէնն էդպէս կը լինի: Այսպէս էր մտածում Հայրօն և խիղճը հանգիստ էր: Ամէն առաւօտ, խարազանն ուսին, եզներն առաջն արած՝ դաշտ էր գնում, և երեկոյեան՝ քթի տակ երգ մրմռալով՝ վերադառնում: Հայրօն էլ ի՞նչպէս չանիծէր, չատէր Միքօյին, որ իր յանգուզն շահատակութիւններով իրար էր տւել քրդերին, զափթիկներին. նոյնիսկ ձայն կար, թէ գիւղում պիտի պահականոց էլ շինւի Պահականոցը շինեց հէնց այն աղբիւրի մօտ, որից ք... գիւղի աղջիկները ջուր էին տանում: Եւ Հայրօն ատում էր Միքօյին ու իր ընկերներին: Սակայն մի դէպք այդ ատելութեան զգացմունքը էլ աւելի զօրացրեց:

Աշուն էր: Գիւղից շատ հեռու, մի ամայի ձորակի

մէջ: Հայրօն ահօսում էր իր վերջին վարելահողը: — Բարի աղողում, Հայրօ: Նա յետ դարձաւ նայեց.

Միքօն էր իր խմբով:

— Աստու՛ բարին, պատասխանեց Հայրօն դժկամակութեամբ:

— Էդ ի՞նչ ես անում, Հայրօ:

— Ղար եմ անում, չե՛ս տեսնում:

— Ինչի՞ համար է այդ վարը:

— Հարցը տարօրինակ էր. Հայրօն պատասխանի փոխարէն՝ երկար նայեց Միքօյին, ապա մրմռաց.

— Ինչի՞ համար է. կ'ասես ինքը չի հասկանում, որ տունն ու տեղի տէր ենք, հացի հոգս պիտի քաշենք:

— Հաց ես աշխատում հա՛մ — ասաց խօսակիցը հեգնութեամբ — լաւ ես անում, Հայրօ, լաւ ես անում: Բայց որ այդքան աշխատում ես, քիւրդ ու թիւրքը քեզ հաց թողնում են. տանդ հաց կա՞յ այժմ:

— Ապա չկա՞յ...

— Շատ ուրախ եմ, որ կայ: Թէ որ այդպէս է, հարեան ջան, տեսնում ես, սար ու ձոր ընկած մարդիկ ենք, գեղերն էլ մանել չենք կարող. մենք եզներդ կը պահենք, դու վազեվազ գեղ գնա՛, մի քիչ հաց բեր մեզ, հարեան ենք, հայ քրիստոնեայ ենք: Ամբողջ մի օր է, որ բան չենք կերել:

Էդ էր պակաս. Հայրօն գնա Փեղայիների, զաչաղաների համար հաց բերի... Նա փորձեց գլուխը ազատել յոգնածութիւնը, գիւղի հեռաւորութիւնը պատճառաբանելով, բայց իզո՛ւր: Միքօն վերջիվերջօ՞ պահանջող, հրամայող, անողորմ հրամայող դարձաւ:

Ճար չկար:

— Ասուած ձեր գործին երբէք յաղողութիւն չտայ,

մրմուաց հայրօն և եղները թողնելով՝ դէպի գիւղ գնաց։
 Պահականոցի առջևից անցնելիս՝ նա մի կանգ առաւ։
 Նրա գլխով մի զարհուրելի միտք անցաւ — չմտնել
 արդեօք օնբաշին պատմել բոլորը և միանգամից պղտու-
 ւել այդ դէ Միքոյից։ Նա նոյնիսկ մի քանի քայլ
 արեց՝ դէպի պահականոցը, բայց հէնց այդ բոպէին
 որտեղից որտեղ՝ մի հատիկ անուն յիշեց, միակը, որ
 նա ո՞վ գիտէ երբ լսել էր ժամում, Յուդա... Նա
 կանգ առաւ, շրթունքները մի քանի անգամ ինքնա-
 բերաբար հնչեցին՝ «Յուդա»... «Յուդա»... Նա լսում
 էր այդ անունը, և նրան նոյնիսկ թւում էր, թէ ինքը
 չէ ասողը, այլ մի ուրիշ խորհրդաւոր անձ նրան կան-
 չում է՝ «Յուդա»... «Յուդա»... Հայրօն արագու-
 թեամբ անցաւ պահականոցի առաջից, նա մինչև ան-
 գամ մի փոքր էլ վազեց... Նա փախչում էր գայ-
 թակղուծիւնից...

Եւ Միքօն ստացաւ հացի պաշարը։ Բայց այս ծանր
 փորձութիւնը կրկնապատկեց Հայրօյի ատելութիւնը։ Նա
 կ'ուզէր, որ Միքոյին բռնեն, սպանեն, քերթեն, անյայ-
 տացնեն, բայց ինքը մաս չունենայ այդ բանում։ Նա
 ոճրից վախենում էր։

Էլի օրեր անցան։
 Հայրօն նորից ընկաւ իր սովորական աշխատութիւն-
 ների յետևից, նոյնիսկ մոռացաւ էլ Միքոյին...
 Աննանային մտալը, ամպամած երեկոյ էր, երբ Հայ-
 րօն տուն էր դառնում դաշտից, դանդաղ ու անհոգ,
 ինչպէս այն զոյգ եղները, որոնք ականջները կախ ձգած
 օրօրեւելով առաջ էին շարժւում։ Եզները որոճում էին,
 Հայրօն էլ երգ էր մրմուռում։ Պահականոցի առաջ նա
 կանգ առաւ քարազած։ Նրա ականջին մի այնպիսի

կանացի ձայն հասաւ, մի այնպիսի ճիչ, որ նա մինչև
 իր ոսկորների ծուծը դողաց... Անասուններն անգամ
 իրենց ականջները խլշեցին այդ ձայնից, Հայրօն ի՞նչպէս
 չդողար... Ներսում մի ոճիր էր կատարւում... Ձոհը
 կին էր, աղբիւրի մօտ երևում էր մի սափոր։ Հայրօն
 ուզեց նորէն փախչել — ուրիշ ի՞նչ անէր. ներս մտնել,
 օգնութիւն աղաղակել ո՞վ, Հայրօն... Բայց նրա ի՞նչ
 բանն է խառնել ուրիշի գործին. ո՞վ գիտէ ում
 աղջկն է, — և նա մի քայլ ձգեց, սակայն երկրորդ
 քայլն անել անկարող էր... Հայրօն զգաց, որ ինքն
 անկարող է հեռանալ այդտեղից, ասես թէ նրան մե-
 խեցին պահականոցի առաջ... Ձարհուրելի չարիքի
 հանդէպ զարթած առաքինութեան հզօր ձայնն էր, որ
 նրան դիւթեց, կաշկանդեց իր տեղում հակառակ իր
 կամքի։

Մէկ էլ յանկարծ զափթիէների ձեռքից պոկւելով՝
 դուրս փախաւ մի կին սրտաձմիկ ճիչով և Հայրօյին
 փաթաթւեց.

— Ամա՛ն ախպէր, ազատիր ինձ...
 Նազօն էր...

Ամպերը որոտացին, կայծակը ճայթեց, Հայրօյի աչ-
 քերը մթնեց... Նրան թւում էր, թէ տիեզերքը կոր-
 ծանւում է, աշխարհը վերջ է առնում... Նա ինքն էլ
 չգիտէր, թէ ուշաթափ քրոջն ինչպէս տուն հասցրեց։
 Յետոյ խարազանը դէն շարտեց, տան մի անկիւնը քաշեց
 և կատաղութիւնից լաց եղաւ, երկար, երկար... Ազդուց
 նա լաց չէր եղել։ Արցունքի խոշոր կաթիլները թափ-
 ւում էին ամէնքի համար, բոլոր վիրաւորած, անպատիւ
 եղած հայ կանանց ու աղջիկների համար, որոնց ցաւն
 այժմ՝ միայն զգաց նա։

Արդէն գիշեր էր, երբ նա կանգնեց, սրբեց աչքերը, տան մի անկիւնից վերցրեց երկար կօպալը (ձեռնափայտ) . . . Հայրը հասկացաւ, որ Հայրօն հեռու տեղ է գնալու . . .

— Ո՛ւր կերթաս լա՛օ, քե՛ մեռնիմ, դուրս մուծձռիկ, երկիրը չար, երկինքը սև, չորս կողմներս կուփ-արնի ծով էս բէխէր սհատիմն ո՛ւր կերթաս, Հայրօ ջա՛ն:

— Չեմ կարող հայր, էլ չեմ կարող . . . Ես տեսայ, էս կողր աչքերս տեսան, չեմ կարող տանել էս պէտք է երթամ: . . . Անձրև՞ է գալիս, աւելի լաւ, թո՛ղ գայ, թո՛ղ կարկուտ էլ գայ. թո՛ղ քարեր, պէտ պէտ քարեր թափուին երկնքից էս գլխիս . . . Օ՛, ես անիծում էի Միքօյին, ես անիծեցի նրա Գործը, և իմ շրթունքները չ'այրւեցին, և ես չպապանձեցի. ինչո՞ւ Աստուած: Թէ Միքօյի գործն անիծած է, ո՞րն է օրհնած, ի՛մը . . . որ դատեմ քրդերն ուտեն, քոյր պահեմ՝ որ զափթիէն տանի . . . Հօ՛, թաղեմ էս գլուխը . . . Դեռ գդակ էլ ունիմ . . . Հայրօյին գգա՛կ . . . ինչո՞ւ, ի՛նչ իրաւունքով . . . Դէ ասա՛, բոլոր կնիկներն էլ պիտի գդակ դնեն էլի . . . Եւ նա խլեց գլխից իր քօլօզը, զարկեց գետնին և դուրս գալով՝ կորաւ խաւարի և անձրևի մէջ . . . Պէտք էր Միքօյին գտնել:

Երկար ժամանակ նա գնում էր մտքում կրկնելով Միքօ, Միքօ. երբեմն վազում էլ էր: Անձրևը ծեծում էր նրան, քամին խառնում նրա մազերը, խճրճում գլխին, և նա շարունակում էր վազել անընդհատ, ինչպէս մի զայրացած գիշերային ոգի, որ փնտռում էր իր զոհին, կամ ինչպէս մի մեռելի ուրւական, որին մօր անէծքը հալածել էր իր գերեզմանից այդ զարհուրելի ժամին . . .

Երկար գնաց . . . Դեռ խաւար էր. յօգնած նստեց

մի քարի վրայ, մտածեց: Օ՛, զարհուրելի բաներ էր մտածում . . . Նա կ'ուզէր այդ ժամին բոց դառնալ հըր-դեհել ամբողջ աշխարհը, որպէս զի այն պահականոցն էլ իր զափթիէներով այրւի, մոխիր դառնայ. պէտք էր վրէժ առնել, պէտք էր մահու գնով սրբել քրոջ պատւի անարգանքը . . . Բայց ի՛նչպէս . . . Նա նորէն յիշեց Միքօյին: Գտնել նրա՛ն . . . Օրեր ու շաբաթներ թափառեց Հայրօն, գտաւ Միքօյին և նրա ոտներն ընկաւ . . .

— Ել չեմ կարող ապրել, չեմ կարող խմբապետ մորթեցէք, քերթեցէք ինձ, դիակս շներին ձգեցէք՝ ինչ հարկաւոր է այսպիսի կեանքը . . . Օ՛, ինձ ասում էին, ինձ պատմում էին, բայց ես ուրիշի ցաւը չէի հասկանում, իմ միսը չէին կտրել, իմ սիրտը չէին ծակել, իմ քոյրը չէր պղծւած, ես անզգայ էի: Այժմ . . . այժմ սպանեցէք ինձ, միայն թէ առէք Նազօյի վրէժը: Կոտորեցէք այդ պահակատունը, կոտորեցէք զափթիէներին, ո՛, կոտորեցէք բոլոր զափթիէներին, առէք բոլոր հայ կոյսերի վրէժը . . .

Եւ նա մռնչում էր ցաւից, տրորում էր, չանգուում էր կուրծքը: Նա այրւում էր ինչպէս բոցերի մէջ: Դեռ երբէք անսիրտ ապերախտութիւնն այդ աստիճան անողորմ կերպով չէր պատժւած, երբէք ապաշխարութիւնն աւելի անկեղծ, աւելի դառն չէր եղած: Եւ Հայրօն հայրուկ դարձաւ: Նա սեղմեց իր այրւած կրծքին պաղ հրացանը, բայց թախիծը նրանից չհեռացաւ. բոց ունէր ներսում. քրոջ անպատուութիւնը նրան հանգիստ չէր տալիս: Նրա ամենասուրբ ցանկութիւնն էր տեսնել պահականոցը, այդ աւազակների բոյնը՝ բոցերի մէջ և պահակները խողխողած, ապա շունչը փչել հանգիտա: յխմբապետ, կրկնում էր նա յաճախ, դժոխք ուղարկես

կ'երթամ, գլուխս հազար մահու կը տամ, միայն վախե-
նում եմ աչքերս չտեսնեն պահականոցի ջարդը“:

Հասաւ վերջապէս Հայրօյի համար սրբազան վօէժ-
խնդրութեան ժամը:

Ուշ աշուն էր, խաւար գիշեր: Բ. . . գիւղը քնեց
երկչոտ քնով: Այն երկրում, ուր Շատախն է, գիւղերը
չեն քնում, այլ մեռնում են գիշերները վտանգի
ահից: Անբուն էր միայն Նազօն: Իր անարգանքից և
եղբօր անյայտանալուց յետոյ՝ նա քուն չունէր, նա
տանջուում էր, նա սպասում էր եղբօրը. . . Հեռու մի
շուն ոռնաց ողբաձայն, տխուր. ապա կաղկանձելով նրան
ձայնակցեցին մի քանի ուրիշները. կազուեց մի չարա-
գուշակ, այլանդակ համբար—միակ նշանը թէ գիւղում
բնակիչներ կան: Յանկարծ մի հրացանի տրաքոց, գիւղը
էլ աւելի կծկեց, ո՛չ մի դուռ չճանչաց. . . Նորէն հրա-
ցանի պայթիւն և ապա՝ մի անընդհատ միահամուռ
գոռոց դնդակների. . .

Նազօն կամացուկ նստեց անկողնի մէջ: Նա ականջ
էր դնում. . . Հրացանների գոռոցի մէջ նաև մարդ-
կային ձայներ էին լսում ուղիղ պահակատան կողմից:
Նազօն ցնցեց: Նրան յանկարծ թւաց, որ այդ բոլորն
իր անձի հետ ինչ որ կապ ունի: Մի ներքին ձայն նրան
ասում էր, որ ինքն է այդ ահաւոր հրացանաձգու-
թեան, այդ աղմուկների պատճառը, որ անպատուութեան
վոէժն է լուծւում, որ այնտեղ Հայրօն. . .

Նա կամացուկ շորերը հագաւ, վեր կացաւ, դուռը
բացեց զգուշութեամբ և բարձրացաւ խրճիթի կտուրը:
Տեսարանն ահաւոր էր. . . Ամբողջ գիւղը լուսաւորւած
էր. պահականոցը վառւում էր բոցերի մէջ և այդ
հրդեհի շուրջը կատաղի կռիւ էր մղւում, հրացանները

ճայթում էին անընդհատ: Նաղօյի յուզւած կուրծքը
բարձր ու ցածր էր լինում. . . Նա և՛ սարսափում էր այդ
կատաղի որոտներից, և՛ հաճօքով էր դիտում հրդեհի
բոցերը: Օ՛, սրբազան բոցեր, որոնք լիզում, մաքրում էին
նրա պատուի վրայի կեղտն ու արատը: Այն միտքը, թէ
իր եղբայրն այնտեղ է, այդ կուրի մէջ է, գուցէ այդ
բոցերի մէջ, գուցէ վերաւոր, նրան մի անօրինակ քա-
ղութիւն ներշնչեց. նա համարեա անյաղթելի պահանջ
զգաց այնտեղ լինել, այդ բոցերի մօտ, իր եղբօր մօտ,
մօտիկից տեսնել իր դահիճների կոտորածը, լսել նրանց
մահամբձ հռնդիւնները, նրանց հառաչանքն ու ճիչը,
տեսնել իր եղբօրը և նրա ընկերներին իրենց սրբազան
զայրոյթի, սրբազան ոգևորութեան մէջ. . .

Եւ ահա նա ցած իջաւ կտրից և ոլոր մոլոր փո-
ղոցներով դէպի պահականոցը վազեց: Մինչ այդ՝
պահականոցի ջարդը շարունակւում էր: Ջինւորներից
ոմանք ոռնում էին բոցերի մէջ խորովելով, ուրիշները
դուրս գալ փորձելով՝ ընկնում էին հայդուկների զըն-
դակներից, ոմանք գլուխները կորցրած խելագարի պէս
դէս ու դէն էին վազում: Ատաղի, անգութ էր մանա-
ւանդ մի հայդուկ, մի թիկնաւէտ, բարձրահասակ գեղ-
ջուկ, որի գլուխը փաթաթւած էր միայն մի լաթի
կտորով: Խմբապետը՝ Միբօն՝ որոտագին հրամաններ էր
արձակում: Բոցերով լուսաւորւած այդ զայրացկոտ դէմ-
քերը զարհուրելի էին: Մէկ էլ յանկարծ բոցերի միջից
մի վերջին գնդակ թռաւ, գլուխը թաշկինակով ծածկած
մարդը երեւաց, գունատեց: Հէնց այդ բոլորէն Նազօն
զրկեց նրան.

— Վախ, քոռանամ ես, Հայրօ ջան. . .

Եղբայրը քնքշութեամբ փարեց քրոջ վզին և

համբուրեց նրան... Հայրօն գունատ էր, շրթունքները
 դողդողում էին. նա կամաց կամաց իր ամբողջ մար-
 մնով ծանրացաւ քրոջ ուսին: Կրծքի վերքից հոսում
 էր արիւնը: Քոյրը սղմեց ձեռքը վերքի վրայ և կրկին
 ու կրկին համբուրեց եղբոր գունատ ճակատը... Հայրօն
 աւելի և աւելի կախւեց, ծանրացաւ քրոջ ուսին և
 նա հաղիւ կարողացաւ թոթովել:

— Նազօ ջան, հիմա կարող ես գդակը գլխիս
 դնել...

Վրէժխնդրութեան բոցերը լուսաւորում էին պատուի
 նահատակի գունատ դէմքը: Նա մեռնում էր, բայց
 քրոջ անարգանքը սրբւած էր...

Է Լ Մ Ի Ա Ղ Օ Թ Ի Ր



Թ... գիւղից հիւսիս մի ժայռ է ցցւած, բարձր,
 այլանդակ. ոչ ոք չի բարձրանում նրա անձոռնի, հպարտ
 կատարը. միայն գիշատիչ թռչուններն են պատառոտում
 այնտեղ իրենց արիւնոտ որսը կամ հանգիստ առնում
 երկար թռիչքից յետոյ, և անդադրում, թափառական
 քամին է գալիս այնտեղ փնտռելու իր մի կորուստը,
 որ երբէք չի ունեցել և կարծես զայրացած՝ ժայռի
 յամառ, դարևոր ամրութիւնից՝ մերթ զայրոյթից մռն-
 չալով և մերթ լալագին՝ հեռու է փախչում, գնում է
 մայր եթերին պատմելու իր ցաւը, որ ոչ սկիզբ ունի
 և ոչ վախճան: Այս ժայռի մէջքին յենւած են մի շարք
 այլ բլուրներ, մի շարք այլ ժայռեր, որոնք կարծես
 խօսքերը մէկ արած՝ յետեից հրում հրհրում են
 առաջին ժայռին, որ շարժեն, տեղահան անեն: Սակայն
 անհոգ է առաջին ժայռը, և որպէս մի հսկայ, որ իր
 մեծ ուժի գիտակցութիւնն ունի, մէջքը դէմ է տւել
 ամէնքի թափին և անսպառ համբերութեամբ պահում
 է նրանց անվերջ, յաւիտեան: Կարծես նա գիտէ, որ
 առանց իրեն հազարաւոր ժայռեր մէկ մէկի վրայ դէպի
 վար, դէպի Թ... գիւղը կը թափւեն և շեղջակոյտերի
 տակ կը ծածկին բոլոր բնակիչներին, որոնք նրա ուժի

վրայ վստահացած հաստատուել են նրա ստորոտում։
 Կայծակն է ճայթում նրա կատարին, շանթի բոցերն են
 լիզում գլուխը, կարկուտն է թափուում, անձրևը ողո-
 ղում, խստաշունչ ձմրանը ահեղ փոթորիկն է անհաս-
 կանալի կատաղութեամբ աշխատում շարժել գլորել
 նրան, — բոլորն էլ իզո՛ր. . . Տարիները գլորում են
 տարիների յետևից և ժայռն այնտեղ է միշտ — անխախտ,
 անսասան, սևացած, մուսլ անձոռնի գիրքով, որպէս
 ծեր հսկայ, որ մէջքին դրած ահագին բեռի ծանրու-
 թիւնից միայն նօթերն է կախել, յօնքերը կիտել։ Շոգ
 ամրանը, երբ կենդանիներն ու մարդիկ սօթից խեղդ-
 ւում են, երբ զով քամիները կարծես խոռված փա-
 խուստ են տալիս խանձած երկրից և արևը վերից իր
 կիզիչ շողերով կրակ է մաղում ամէն կողմ, ժայռի
 ստորոտում խիստ ախորժելի սոււեր է լինում։ Այստեղ
 շատ մօտ է տէր Սարգսի տունն ու իր կալը, ծերունի
 քահանան ժայռի սոււերում սիրում է հանգիստ առ-
 նել կալում էրան անելուց յետոյ։ Յաճախ այդ ժամերին
 հաւաքուում են այստեղ ուէսն ու միւս գիւղացիները
 և խօսում են իրենց աշխատանքներից, իրենց ցաւերից,
 հոգսերից։ Թ. . . գիւղն այցելող բէգերն ու շէյխերը
 իրենց խուլամներով և տաճիկ պաշտօնեաները իրենց
 զափթիկներով ամառ ժամանակ այս ժայռի զով սոււե-
 րումն են հանգիստ առնում և հիւրասիրում։ Նրանց
 ձիերն էլ այնտեղ տեղ ունեն ժայռի մէջ. ո՞վ գիտէ նրբ
 և ո՞ւմ ձեռքով փորւած են կանթեր, որոնցից կապում
 են ձիերը։ Տարիների ընթացքում ինչեր է տեսել և
 լսել այս ժայռը, և սակայն լուռ է. . .

Գարձեալ ամառ էր, դարձեալ շոգ-կրակ, բայց կա-
 լերում կենդանութիւն չէր երևում և ժայռի ստորո-

տում ոչ ոք չկար։ Գիւղի փողոցներում էլ մարդ չէր
 երևում։ այդ օրը գիւղացիք ամէնքն էլ եկեղեցումն էին։
 Ժամաւորները մեծ ու փոքր, մարդ ու կին, շրջապատել
 էին երկու նաշեր և տէր Սարգսի թաղման կարգն էր
 կատարում։ Աեց ամիս առաջ էր ընդամենը, որ Մուրօն
 ու Նափօն բանտ տարւեցան, և այժմ նրանց բանտից
 դուրս բերեցին մեռած։ Ասում էին, որ հիւանդացել
 են ու մեռել։ Բայց ինչո՞ւ էին բանտ տարել այդ մարդ
 չիմացաւ, ոչ զոհերը և ոչ նրանց հարւանները։ Մար-
 դիկ չհետաքրքրեցին նրանց վիճակով, ամբողջ գիւղում
 միայն Թաթուլն էր, տէր Սարգսի տղան, որ կնձուեց
 իր ճակատը, կրծոտեց իր շրթուները, մի փոքր դէս
 ու դէն ընկաւ, և միայն այսքան, ինչպէս ցանցում
 բռնւած թռչուն, որ թռչկոտում է, ելք է փնտում
 և իր ճիգերի անզօրութիւնը տեսնելով, հանդարտում,
 լուում։ Դեռ փոքր հասակից գիւղացիք նրան «նադինջ»
 Թաթուլ կոչեցին, որովհետեւ գիւղում կատարւած յաճա-
 խակի անարդարութիւնները զայրացնում էին Թաթու-
 լին, և երբ մէկին թակում էին և կամ բանտարկում,
 երբ կողոպտում էին կամ անպատիւ անում, Թաթուլը
 կրծոտում էր շրթուները և մուսլում. . . Թաթուլը
 գիտէր, որ մի բան պէտք է անել որ այդպէս չի կարելի,
 բայց թէ ի՞նչ, այդ էր որ նա չգիտէր։

Այսօր այդ «ինչը» կարծես նրա համար լուծւում
 էր. նա մուսլ էր, մտազբաղ և յափշտակած։ Նա
 կրծոտում էր շրթուները և մոռանում էր նոյնիսկ
 ժամանակին խնկարկել բուրվաւոր շարժել։ Նա նայում
 էր մեռելների դէմքերին մի այնպիսի յամառ ուշադրու-
 թեամբ, որ կարծես թէ իր ճակատագիրն է կարդում
 այնտեղ։ Նափօյի և Մուրօյի դէմքերը նման չէին ո՛չ մի

մեռելի դէմքի. սրանց արտայայտութիւնը անօրինակ էր անհասկանալի, բայց բազմախորհուրդ: Թաթուլն աշխատում էր հասկնալ այդ արտայայտութիւնը, աշխատում էր խորը թափանցել ընդմիջտ բաց մնացած նրանց աչքերի մէջ: Թաթուլն համար դրանք երկու դէմքեր չէին այլ երկու խորհրդաւոր հանելուկներ, որ նա լուծել էր աշխատում. . . Ահա թէ ինչու նայում էր և մոռանում խնկարկել: Նրան թւում էր, որ Մուրօն և Նափօն փչել են իրենց վերջին շունչը առանց ասել կարողանալու ինչ որ զարմանալի բաներ, որ միմիայն իրենք գիտէին և որ կ'ուզէին ասել նրան Թաթուլին ասել Թ. . . գիւղին, ասել նոյնիսկ ամբողջ աշխարհին: Երկու դէմքերն էլ կարծես թէ մի երկու ժամի կեանք էին խնդրում, որ խօսեն, դուրս թափեն սրտերի թոյնը պատրաստ այնուհետև հազար մահով մեռնելու: Թաթուլը չէր ուզում, որ այդ գաղտնիքը գերեզման իջնի, ծածկի յաւիտեան, նա շարունակում էր նայել, նայել. . . Մի ըրպէ նրան թւաց նոյնիսկ, որ Նափօյի շրթունքները շարժեցին, որ նա բաներ շշնջաց. Թաթուլը տեսաւ մինչև անգամ, որ մեռելի գլուխը շարժեց, բարձրացաւ սրտի սաստիկ տրոփիւնով մոռացած և իր բուրվառը և յուղարկաւորների բազմութիւնը, նա խորին յուզմունքով առաջացաւ, մի փոքր կոացաւ դէպի մեռելը, որպէսզի լաւ լսի մեռելի զարհուրելի պատմութիւնը, բայց հէնց այդ ըրպէին հայրը զայրացած գոչեց.

— Թաթուլ, ի՛նչ է պատահել քեզ, բուրվառը: Նա յետ յետ քաշեց. մեռելների դէմքերն անշարժ էին, գլուխներն իրենց տեղերում, նա շարժեց բուրվառը, բայց բոլորովին հակառակ կողմը: Այս բանը ևս առաւել ապշեցրին ամէնքին: Տէրտէրը վերջին աւետարանն

էր կարդում և մեռելների հակառակ կողմն անցաւ: Թաթուլը գոհ եղաւ, այժմ շատ մօտիկից կարող էր դիտել նրանց դէմքերը և . . . նայում էր. . . Նափօյի յօնքը ջախջախած, կապտած էր, Մուրօյի աչքի տակ կար մի մեծ կապոյտ նշան, իսկ բաց մնացած աչքերը արտևանունքներ չունէին, փեռած էին: Մուրօյի վերին շրթունքը պատուած էր և նրա բացածքից երևում էին ընդերքը փշուած ատամներով:

Դէմքերն այժմ էլ լուռ չէին: Նրանք խօսում էին աչքերով, յօնքերով, շրթունքներով, պատմում էին Թաթուլին սարսափելի բաներ. . . Այժմ նա գիտէր, թէ ի՛նչ է նշանակում այդ տարօրինակ արտայայտութիւնը, որ ո՛չ մի ուրիշ մեռելի դէմք չի ունեցել. գիտէր Մուրօյի և Նափօյի գաղտնիքը, որ էլ գերեզմանը ծածկել չէր կարող, գիտէր թէ ի՛նչ է նշանակում տաճկական բանտ, տաճկական արդարադատութիւն. . .

*

Թաղումը վերջացաւ: Վալերում աշխատանքը վերսկսեց:

Ճաշ էր: Թաթուլն ու հայրը պատրաստում էին հէշան անել երկու դէղերի առաջ հայր և որդի մի փոքր վիճեցին. մէկն առաջարկում էր փոքրը քանդել, միւսը դէպի մեծն էր դիմում. տէր Սարգիսը առարկութիւն չէր սիրում, ուստի երկմատէնը ձեռքին առաջացաւ դէպի մեծ դէզը. Թաթուլը այդ ըրպէին մի այնպիսի շարժում արեց, որ կարծես կամենում էր արգելել հօրը մօտենալ մեծ դէզին. յետոյ մի ըրպէ կանգնած մնաց մտազբաղ, յանկարծ ձեռքով մի ջրոտ շարժում

արեց և մի խիստ որոշում կայացրած մարդի յանդգնութեամբ հաստատ քայլերով ինքն էլ մօտեցաւ միևնոյն դէզին:

Հայր և որդի միաժամանակ տնկեցին իրենց երկմատէնները մի մի խրձի մէջ, վեր բարձրացրին և միաժամանակ, ասես սառած, կանգ առան առանց կարողանալու խրձերն այս կամ այն կողմը ձգել. . . «Տէր, և մի տանիր զմեզ ի փորձութիւն» մրմնջաց տէրտէրը. ապա նա ձգեց խուրձն ու երկմատէնը, սաստիկ սպրտնած յետ յետ քաշեց՝ սարսափած նայելով այն խոռոչին, որ բացել էր դէզի վրայ երկու խրձերի վերցնելուց յետոյ, կարծես թէ ահաւոր օձեր էին լուռ դրել այնտեղ. . . Յետոյ կրկին առաջացաւ դէպի դէզը և, զգուշութեամբ, ոտները ծայրերի վրայ, կարծես թէ վախենալով զարթեցնել շոգի ձեռքից մնջած միջատներին անգամ: Մէկ էլ նայեց դէզի խոռոչի մէջ, նրա շուռնչ բռնելով էր յուզմունքից. նա գլուխը բարձրացրեց և հօր ու որդու հայեացքներն իրար հանդիպեցին: Մի փոքր ժամանակ նրանք լուռ նայում էին իրար: Որդին համարձակ, իսկ հայրը սարսափած: Այնտեղ, դէզի խոռոչի մէջ, արևի կիզիչ շողերի տակ փայլիլում էին մի քանի հրացանների փողեր. հայրը ձեռքը մեկնեց դէպի այդ սարսափելի խոռոչը և սղմած ծնօտների միջից գոչեց.

— Սրանք. . . դո՛ւ. . .

— Ե՛ս:

— Չարը քեզ կապեց, խեղճդ յանկարծ թռաւ, թէ Աստուած անիծեց քեզ էլ իմ օջախն էլ:

— Ո՛չ չարը կապեց, ո՛չ խելքս է թռել, ո՛չ Աստուած անիծեց մեզ և մեր օջախը: Այս գործի համար Աստուած թէ անիծի. . .

— Ապա ի՞նչպէս այդ ամէն բաներն ընկան տէր Սարգսի կալը, աշխարհում էլ տեղ չկար, որ սատանան խրատեց քեզ:

— Հայր, տեսա՞ր դէմքերը. . .

— Ի՛նչ դէմքեր:

— Տեսա՞ր Մուրօյի և Նալօյի դէմքերը:

— Հո՛, տեսայ երկու մեռելի դէմք. նրանցից առաջ էլ շատերն եմ տեսել, այսուհետև էլ կը տեսնեմ ուրիշները. ո՛չ որ անմահ չէ:

— Հայր, մեռել էլ կայ, մեռել էլ այս երկուսը մեռած չէին:

— Մուրօն ու Նալօն, չէ՞ որ բանտից մեռած բերին նրանց:

— Այո՛, բանտից բերին, բայց նրանք մեռած չէին: Նայեցիր դէմքերին. նրանք խօսում էին, և ես լսեցի նրանց ասածները, երբ բուրվառ էի ձգում: Նրանք բաներ փոփոսցին և ես հասկացայ, և ի՛նչպիսի բաներ. . . Այն նրանց, որոնք չեն լսի: Նրանք ինձ ասացին, ա՛ռ հրացաններ և տուր ամէնքին, ով գլխին կրում է քօլօղի մի կտոր, ով որ կնիկ չէ, ով որ իր կրծքի տակ քարի փոխարէն մի սիրտ է կրում զգալու ընդունակ, որ ուրիշը լացը լսելիս մորմարալ գիտէ, կսկծալ գիտէ. որ խուլ չէ և լուռ է իր շուրջը հնչող աղետարշ ձայները, որ կոյր չէ և տեսնում է, թէ ինչն էր ես ասոյ կատարում այժմ մեր սև երկնքի տակ: Եւ ես առայ այս զէնքերը, ես, քո որդին. . . Անիծիր ինձ, եթէ կամեսնում ես. հօր անէծքը զարհուրելի է, բայց այս մեր վիճակն էլ անուն չունի:

Մի փոքր ժամանակ լուռ թիւն տիրեց:

— Ես չեմ անիծի քեզ, որդի, ասաց տէրտէրը մի

փոքր հանդարտւած, տեսնելով որդու յուզմունքը... Ես չեմ անիծի. իմ շրթունքներեց անէծք չի դուրս գայ, այլ միայն աղօթք. այժմ էլ կ'աղօթեմ քեզ և բոլոր աշխարհի համար:

— Աղօթք, ինչ եղաւ քո աղօթքը, երբ փշուում էին Նափօյի ատամները, երբ ջարդում էին նրանց յոնքերը, փետում արտանունքները. մնացածը բանափ պատերից հարցրու: Այս հայր, ես էլ չեմ աղօթի, այս ձեռքը էլ երբեք բուրվառ չի ձգի, այս շրթունքները էլ երբեք աղօթք, աղաչանք չեն արտասանի, իմ կրծքից երբեք էլ հառաչանք ու հեծեծանք չի դուրս գայ, այս սև ժայռը, մեր անարգանքի, մեր սարկուձեան, մեր ցաւ ու հոգսերի այս գարաւոր փգան էլ երբեք իմ բերանից չէլի մի բառ, որ ամօթ բերէր մի աղամարդի: Այսուհետև աղօթքի փոխարէն այսպէս պիտի գործեմ ես, և եթէ այս հաճելի չլինի Աստծուն, ես կը բողբոքեմ նրա դէմ անդամ, ես կը դռնում աշխարհոյս մէկ թէ արդարութիւնը երկնքից չի գալիս, թէ անարդարութեան, չարագործութեան նիւթող հովանաւորող է Աստուած... Բայց այդ անկարելի է, ես համոզւած եմ, որ երկինքն էլ կ'օրհնի իմ ճանապարհը...

— Ախր ինձ, որդի. ես ծեր եմ, փորձւած, իսկ դու ջահել ես ու անփորձ, և խօսածներդ չարի թեղազրուձիւն են: Հայ քրիստոնեան նման է այս ժայռին. անօրէնները փոթորիկներն են, որ կ'անցնին նրա կատարով առանց խորտակել կարողանալու նրան: Հանգիստ եղիր և աղօթիր Աստծուն. իսկ այս բաները հէնց այս գիշեր այնպէս անյայտացրու, որ աշխարհում ոչ որ չլի քո ոտնաձայնը:

— Հէնց այս գիշեր ես կը հեռացնեմ նրանց, բայց

իմացիր, որ ինձ այլևս չես տեսնի... Ես կ'երթամ այնտեղ, ուր հոսում է արիւն, ուր թափւում է արցունք և ուր թշւառ մարդը ծանր հարւածի տակ միայն չի աղաչում, հապա նաև բողբոքել գիտէ, կուսել գիտէ. կը գտնեմ ձեռներ, որ մահի հետ միասին այս մահի գործիքն էլ բռնել գիտեն: Եւ երանի թէ երբեք, երբեք չլիշես ինձ...

Եւ նոյն գիշերը հեռացաւ Թաթուլը:

*

Մի ամբողջ շաբաթ էր, որ շաբթի բեգը ժայռի սուերում վայելում էր անէր Սարգսի ձոխ սեղանը Նրա ստօրութիւնն էր ամէն ամառ մի քանի օրով «հիւր» դալ իր «քիրկա քէշիլին»: Բայց երբեք այսքան երկար չէր մնայեր: Այս հանդամանքը չարագուշակ էր թւում թէ քահանային և թէ գիւղացիներին. ամէնը վատնուում էին տերտերի աղջիկ գոհարի համար, որի գեղեցկութեան հաշակը տարածւած էր շրջակայքում: Տէրաէրը աղօթքի միմունջները շրթունքներին աշխատում էր ամէն կերպով գոհ անել բեգին, և նա յոյս ունէր: Այլ մի քանի օր անցաւ, և մի երեկոյ նա տուն մտաւ երեքադով ուժասպառ, ու երբ գիշերն ամէնքը քնեցին, նա երկար, երկար աղօթեց. նրա ծեր աչքերից հոսում էին դառն արցունքներ, նա հեկեկում էր երեխայի պէս:

— Ինչու ես արտասուում, հարցրեց տիրուհին, չլինի Թաթուլին...

— Երանի թէ իմ արցունքները միայն Թաթուլի պատճառով լինէին, կնիկ: Աստու պատիժը վրայ է հասել մեզ բեգը...

— Բէգը, ինչ:

— Գոհարին է ուզում... թէ չէ, ասում է... գիւղը կ'աւերեմ, կրակ կըտամ:

— Կուրացէք աչքեր, խրացէք ականջներ, այս էլ պիտի տեսնէի, այս էլ պիտի լսէի, սրա՞ համար եմ ապրում, և կինը երկու ձեռքով խփեց գլխին ու կուացաւ:

— Կնիկ, ճար չկայ, անօրէն գազանը կ'անի, ինչ որ ասում է. ես աղաչեցի, արիւն-արցունք թափեցի, ձեռքերը համբուրեցի, այս ձերմակ միրուքս ու մաղերս նրա սաների փոշու տակ տրորեցի, բոլորն իզուր: Գիւղը կը կոտորեն... Օ՛Փ, Ասուած, որ մեղքիս համար...

== Լուսնի սիրեց:

— Ես արթուն եմ, հայր, գոչեց Գոհարը յանկարծ: Ես բոլորը լսեցի. բէգն ուզում է ինձ... Ահ, սե՛ օր, սեւա՛նօր գլուխ...

Ապա նա վեր ցատկեց անկողնից կիսամերկ, ձգւեց իր ամբողջ սիրուն հասակով, որ գծագրւում էր կիսա-խաւարի մէջ ինչպէս մի զայրացած ոգի, և շարունակեց:

— Հայր, գթոտ եղիր. ասա՛ ինձ գոնէ, ո՛ւր է իմ թաթուլը, ո՛ւր է իմ եղբայրը. չէ՛ որ եղբօր հզօր ձեռքը պիտի պաշտպանի. քրօջ պատիւը. ո՛ւր է այդ ձեռքը. զո՛ւր է ուրեմն, որ խեղճ՝ քոյրերը ջիւան եղբայրների արեւոյն են երգւում, նրանց ցաւն առնում, նրանց գլխով պոտոյտ գալիս... Այս իմ սե օրին ո՛ւր է թաթուլը, ո՛ւր է իմ եղբայրը, դու գիտես չէ՛, հայր: Ա՛խ, քանի՛ անգամ ես քեզ հարցրել եմ, քեզ աղաչել, պաղատել եմ, և դու միշտ լռել ես: Չէ՛, նա այստեղ լինէր, բէգն ինձ չէր տանի: Ես չէր տայ, չէր տայ: Գէ՛, գոնէ հիմա ասա՛, անխիղճ հայր, ո՛ւր է թաթուլը...

Հայրը լսում էր գասապարաւածի պէս: Աղջիկը կրակ

կարած խօսում էր ու խօսում: աչքերից թափւում էին արցունքները, բայց միայն վշտի, յուսահատութեան նշան չէին նրանք. նա արտասւում էր նաև զայրոյթից, կատաղութիւնից:

— Ել ոչինչ չունեմ ես, շարունակեց աղջիկը, ոչինչ ոչինչ... Եղբայրս ձգեց ինձ անտէր, անպաշտպան, հայրս անզօր է անօրէն բէգի առաջ: Աւաւոր աղջիկներ, պատիւ էք պահում որ օրւայ համար. կամ ելէք միասին ձեռք ձեռքի բռնած սե ժայռի կատարից ներքև գլորւենք, կամ թէ չէ գնանք բէգերին ծախւենք, չէ՛ մեր պատիւը նրանց է պատկանում, երբ հայրեր, եղբայրներ ձգում են մեզ անտէր: Ես առաջինը գնում եմ բէգին...

Եւ նա արագ քայլերով դէպի դուռը գնաց, բացեց և դուրս գնաց, անյայտացաւ խաւարի մէջ: Երկու ծերերի լացը հնչեց խրճիթում:

*

Միւս առաւօտ սարսափած գիւղը լսեց գիշերւայ անցքը— Գոհարի անյայտանալը: Քահանան կապւած էր ժայռից, որովհետև թագքրել էր աղջկան: Թայռի ստորոտից նա մարած աչքերով դիտում էր, թէ ի՛նչ է կատարւում թշառ գիւղի գլխին... Ողբ ու լաց, անէծք ու աղաղակ պատել էր գիւղը: Թալանն սկսած էր. քահանան էլ չէր արտասւում, այլ մտածում էր. նա չէր աղօթում, այլ անիծում էր: Կա կ'ուզէր այժմ թաթուլին տեսնել, միայն թաթուլին, այն փայլուն հրացաններով, այն բոցոտ աչքերով, այն ահաւոր յօնքերով: Բայց թաթուլը չկար ու չկար: Ո՞վ էր մեղաւոր— ինքը, միայն ինքը: Ապա նա սկսեց մտածել թէ թաթուլը մոռացած չի լինի հայրենի օջախն ու գիւղը, այդ ան-

կարելի է: Այն, թէ իմանար, ինչ է կատարուում այստեղ, նա կը գար, կը գար ինչպէս մի արծիւ: Նրա աչքերը դառնում էին ահամայ դէպի այն կողմը, բլրի վրայ, ուր ոչոր մի ձանապարհ ձգուում էր գիւղից վեր, վեր: Նայում էր և սպասում:

Բէգն եկաւ, նրա ջանքերն իղուր էին անցել Գոհարին գտնելու համար:

— Ո՛ւր է Գոհարը, որտաց նա:

— Բէգ, քեզ ասացի, որ նա ինքն է փակել Բէգ, մենք տարիներով աղ ու հաց ենք կերել միասին, իմ տունը, իմ օջախը քո առաջ բաց է եղել: Ընթր ինձ, այդ աղ ու հացը ոտի տակ մի տուր: Բէգ, վազուածիւն մի արա մեզ հետ: Վերե նայիր, Ասուած կայ այնտեղ, կրօններս տարբեր է, չէ՞ որ միւկնոյն Ասուածն է դատելու ամէնիս:

— Ժամանակները փոխուել են... ուր է Գոհարը:

— Բէգ, իմ ծերութեանը խնայիր, հանգիստ թող գիւղը կամ աւերիք միայն իմ տունը. անարատ թող իմ պատիւը: Բէգ, վերջին անգամ աղաչում եմ քեզ, Բէգ, Ասուած...

— Մեր Ասուածն ու ձերը մէկ չէ. ասա՛, ո՛ւր է Գոհարը, շուտ, թէ չէ... և նա վրայ վաղեց ծերունուն՝ բռունցքները սեղմած, ասամենքը կրճտացնելով: Այժմ նրանք շատ մտ էին իրար. նրանց շունչը հասնում էր միմեանց դէմքին. մի առժամանակ լուռ նայում էին իրար... Լուռ թիւնն ընդհատեց քահանան:

— Բէգ... բայց նա չկարողացաւ շարունակել, և ուժգին թափով թքեց բէգի երեսին: Սա անսպասելի և սարսափելի էր բէգի համար: Նա ահամայ յետ յետ քաշեց, ինչ որ հրամաններ արձակեց, և իսկոյն մի

քանի քրդեր շարեցին քահանայի առաջ, փորրիկ տարածութեան վրայ. քահանան հասկացաւ, որ մահը մտ էր: Նա մէկ էլ բարձրացրեց գլուխը, նայեց այն ճանապարհին... Մի թէ նա մեռնում էր առանց թաթուլին տեսնելու. մի թէ նա գալու չէր: Ճանապարհի վրայ ոչինչ չկար, բացի մի թուխպ ամպ, որ հանդարտ իջնում էր բլրի կատարից. ամպ էր իրաւ թէ փոշի, և ինչու չէր կարող հէնց այդ ամպը թաթուլը լինել, մտածեց քահանան: Մի հնար, մի հնար մի քանի ժամ էլ ապրելու համար, մտածում էր նա, միայն մի քանի ժամ, գիտեմ թաթուլն է, նա չէր կարող մտանալ իր օջախն ու գիւղը: Ծանր էր նորից շնորհ խնդրել բէգից, բայց ճար չկար:

— Բէգ, ասաց նա, մահից չեմ վախենում, դու էլ ոչինչ չթողիր ինձ աշխարհում, որից բաժանուելը ծանր լինի: Թող ինձ միայն, որ աղօթեմ, վերջին անգամ աղօթեմ:

— Աղօթիք:

— Եւ նա սկսեց աղօթել: Նա աղօթում էր և նայում այն ճանապարհին, որտեղից արագութեամբ իջնում էր փոշու ամպը... Աղօթի իւրաքանչիւր բառը նա արտասանում էր առանձին հանդարտութեամբ, առանձին դանդաղութեամբ, աշխատելով որքան կարելի է շատ ժամանակ վատտակել, շատ ապրել: Իսկ փոշու ամպն իջնում էր հո՛ս իջնում: Առաջին անգամն էր, որ տէր Պարգիսն աղօթում էր ո՛չ Ասածուն. առաջին անգամն էր, որ նա իր աղօթքը գործիք էր դարձրել և պատրաստում էր վրէժխնդրութեան մի արիւնտա գործ: Իսկապէս այսօր նա աղօթք էլ չէր ասում, այլ բառեր, բառեր, անխմատ բառեր, որոնք միայն ժամանակ էին

նշանակում, և ուրիշ խորհուրդ, ուրիշ պարունակութիւն չունէին. հնչունները դարձել էին վայրկեաններ, բառերը բոսկիներ, աղօթքը ժամ, ժամանակ և ուրիշ ոչինչ: Նա կ'ուղէր, որ իր աղօթքը այսօր վերջ չառնի: Քանի անգամ վերջացաւ աղօթքը, քանի անգամ նորից վերսկսեց և շարունակեց նոյն դանդաղութեամբ:

Արեւը մայր մտաւ. երեկոյեան մառախուղն իջաւ երկրի վրայ. արեւը լուսնի փայլեց լուսնի եղջիւրը, նրա պաղ շիթերն ընկան երկրի վրայ ձևացնելով մուսլ ստերներ. ընկան նաև թշուառ գիւղի և այն ժայռի վրայ, որի ստորոտում կատարում էր ոճիրը: Գահիճների համբերութիւնը հատաւ:

— Բաւական է, գոչեց բէգը, այժմ վերջին անգամ սաս', ո՛ր է Գոհարը:

Տէր Սարգիսը պատասխան չուէց: Նա յուսահատ էր և սպասում էր մահուան. Թաթուլը չկար: Բէգը նշան արեց և քրդերն իրենց հրացաններն ուղղեցին նրա կրծքին. բայց յանկարծ ամէնքը կանգ առան. վերեւից, ժայռի կատարից՝ լսեց մի ձայն.

— Գոհարն այստեղ է բէգ, ե՛կ ու տար: Տես, ես այստեղ եմ. ի՛նչ ես ուզում այդ խեղճ ծերունուց, այ անամօթ չուն. . .

Ամէնքը նայեցին դէպի վեր: Այնտեղ, ժայռի ամէնաբարձր կէտում, լուսնի շողերի տակ, գծագրւում էր մի կանացի չքնաղ մարմին: Նրա միակ ծածկոյթը իր սպիտակ կտաւէ շապիկն էր, որ ծածկում էր նրա մերկութիւնը մինչև սրունքները: Ան երկայն մազերը ցան ու ցրիւ փուշած էին ուսերի և թիկունքի վրայ և երեկոյեան հովը խաղում էր նրանց հետ: Նա կանգնած էր այնտեղ, ինչպէս երկնքից իջած մի հրեշտակ, որ

այդ բարձրութիւնից դիտում էր, թէ ի՛նչ անլուր ոճիրներ են կատարւում այնտեղ ներքեւում՝ աշխարհի վրայ: Մարդկային վայրագութեան այդ սև գործերից նա այնքան բարձր էր, որքան սրբութիւնն ու անմեղութիւնը բարձր է ապականութիւնից, որքան առաքինութիւնը բարձր է ախտերից: Այդ բարձրութեան վրայ նրան չէին կարող հասնել ներքեւի ցեխն ու աղտեղութիւնը. նրա սուրբ պատիւը շատ վեր էր կանգնած լիտի բէգերի բոլոր գարշութիւններից: Բէգը նայեց նրան և աչքերը վառւեցին բորբորիտ բոցով, այդ չքնաղ պատկերը ժամ առաջ տիրելու անյագ տենչով: Նա կ'ուղէր այդ ժամին դռնալ ծխի մի պտոյտ, վերև բարձրանալ և փարել աղջկան, կամ թևեր ստանալ՝ թռչել վեր, վեր, ճախրել նրա գլխով, ապա խլել և փախցնել: Նա մոռացաւ ամէն բան — և՛ քահանային, և՛ գիւղի թալանը, և՛ ժայռի բարձրութիւնից լսած ծանր անարգանքը, ու չքնաղ պատկերով դիւթւած՝ նայում էր դէպի վեր, անկարող լինելով հայեացքը հեռացնել:

Գեռ նախորդ գիշեր տանից խոյս տալով՝ Գոհարը վաղեց դէպի լեռները, և ամբողջ գիշերը ճանկուելով ժայռերը՝ իր կուսութիւնն ու պատիւը հասցրեց այս բարձրութեան վրայ, ժայռի կատարը, մօտիկ երկնքին: Ամբողջ ցերեկը նա ծածուկ դիտում էր այնտեղից, թէ ի՛նչ է կատարւում գիւղում: Երեկոյեան երբ սեսաւ, որ բէգը իր հօրը սպանելու է, սարսափելի որոշում տաւ — ձայն տալ յայտնել իր թաքստի տեղը, իսկ երբ բէգի մարդիկը գան բռնելու իրեն, ձգւել այս ժայռի կատարից դէպի վար և իր մահովը փրկել հօրը մահից: Եւ ահա նա այժմ կանչում էր բէգին, որ գայ տանի իրեն:

Չորս Տինգ քրդեր, խմբից բաժանելով՝ դէպի բլուրները դիմեցին, բայց մի քանի բոպէ յետոյ հեարով յետ եկան, գուարով բէգին, որ փախչեն, հեռանան, որովհետեւ գիւղը լեցել է ջան Ֆէդայիներով:

— Արահ, որտաց բէգը, կրահ—և նոյն վայրկեանին հրացանները որտացին ու մի քանի գնդակներ թռան դէպի ծերունի քահանան...

Լսեց յետեից մի այլ խմբի հրացանների որոտ, մի քանի քրդեր գետին ընկան, և ժայռի ստորոտում կատաղի կոխ սկսեց... Թաթուշն էր իր խմբով: Նա կատաղի էր և անխնայ: Քրդերից ոմանք փախուստով ազատեցին, ոմանք էլ ընկան վերաւոր կամ մեռած: Բէգը նոյնպէս ընկաւ:

Թաթուշը մտեցաւ ժայռին սիրտն արիւնով լի, սեռաւ ժայռից կախած հօր դիակը և փարեց նրան դառն արտասուելով: Ասկայն ծերունին շնչում էր դեռ ևս. նա բացեց աչքերը, ճանաչեց որդուն և մեղմիկ շշնջաց.

— Էլ... մի... աղօթիր... Ասուած... կը ների... Բիչ յետոյ գոհարը սգում էր հօր դիակի վրայ:



Մ Ա Յ Ր Ը



Աշ գիշեր էր. ամէնքը վաղուց քնած էին, բայց փւղի եզրում մենաւոր խրճիթ մէջ տակաւին խղճուկ լոյս էր պլպլում: Գարթան նստած էր մենակ, խորին տխրութեամբ նայում էր ճրագի լոյսին և դանդաղութեամբ օրորում էր իր ծեր, յոգնած գլուխը: Նա մտածում էր: Խեղճ, նա աշխատում էր հասկանալ բացատրել թէ ինչպէս պատահեց, որ իր շէն օջտիւր այս կարճ ժամանակում դարձաւ աւերակ, թէ ինչու ինքը՝ ընտանիքի մայր, սիրող ամուսին՝ յանկարծ, սսես մի չար, դիւթական ձեռքով դարձաւ այրի, մոռացած ամէնից, զոհ խաւար գիշերուայ միայնութեան, անտերութեան սարսափներին, դարձաւ մի սեւաւոր, անձար բու, որ խաւար լուսութեան մէջ չարագուշակ վնայ, վնայ է կանչում: Ինչու համար այս բոլորը... Մէկը միւսից ահաւոր, սե մտքեր գալիս խոնուում էին նրա գլխում, լուծում պահանջում... Արքան բան կար մտածելու: Ատաբախտ, կարճամիտ կնիկ, որ մէկը հասկանար, որ մէկ հարցը լուծէր...

Չիթէ ճրագի ծխախոռն բոցը մեղմիւ օրորում էր, մերթ հանդարտ վերանում, մերթ ցածրանում, գողգողում էր, կարծես նա էլ էր անհանգիստ, նա էլ էր

վախենում: Հեշտ է, մենակ, գիւղից դուրս, մենաւոր, ձգւած խրճիթում... Ճրագի լոյսից ձգւած սուերները խրճիթի այս ու այն կողմում նոյնպէս լաւ չէին, անդուր էին. Մարթան աշխատում էր նրանց էլ չնայել: Միայն լոյսն էր մխիթարական, միայն նա չէր վախեցնում. ի՞նչ փոյթ, որ խղճուկ լոյս էր, որ հոգեւորք հիւանդի պէս մտա էր հանդչելու. չէ՞ դարձեալ լոյս էր, օրօրուն, պլպլան լոյս. Մարթան նայում էր նրան և մտածում, մտածում... Հէնց այս առաւօտ թաղեց նա իր ամուսնուն, իր խեղճ, ջրատար Միտին: Ախ, ինչ օրեր քաշեց թշուառը, որքան չարչարեց...

— Ոտքդ կտարւէր, տակդ մնար, որ դու իմ տունը ոտք չկոխէիր, թորոս. քեզ տեսնեմ գնացած ճանապարհդ մէկ տակ դառնայ. թող քո մօր տունն էլ իմի պէս սուգ մտնի:

Այս սարսափելի անէծքը նա արտասանեց բարձրաձայն, ձեռքն ուղղելով դէպի ճրագն ու ծխոտ, մրոտ ճրագակալը — կարծես նրանց հետ խօսելու լինէր: Թորոսը հարեան գիւղից հեռուոր ազգականի որդի էր. նրան էր անիծում Մարթան, նրա վրայ էր թափում սրտում կուտակւած թոյնը. նա էր գլխից հանել տարել Մինասին, իր միտուճար որդուն: Այժմ Մարթան լաւ յիշում էր բոլորը: Նա էր, անասուած թորոսն էր միշտ գալիս, տանից դուրս կանչում, գնում էին, առանձնանում, խօսում, խօսում, փախում: Ի՞նչ էին խօսում այնքան, — ինքը կարող էր իմանալ: Դէ, ընկերներ էին. ախ, թէ իմանար... Գնացին, եկան, փախացին, գնացին, եկան, և մի գիշեր անյայտացան: Ախ, սե գառնար էն գիշերը: Անխիղճ, անխիղճ, միմնջում էր պառան, այս անգամ խօսքն ուղղելով որդուն. Թորոսն

օտարի որդի էր, չցաւեց, խակ դու... Թէ չմեղքացար քո ջրատար ծնողներին, խղճայիր գոնէ քո խեղճ ջահիլին, քո կնոջը, որին անտէր ձգեցիր: Օ, այնուհետեւ ինչէր անցան իրենց սեւաւոր գլխով, ի՞նչ օրեր քաշեցին: Խեղճ հալւորին տաճիկները տարան, բերին, բանադրին, ձեծեցին, ձեծեցին, որ Մինասի տեղն ասի: Ախ, ինչ անասուած են այդ անօրէնները: Մեր ցաւը, մեր սե օրը մեզ բաւական չէր, սրանց գազանութիւնն էլ մի նոր պատիժ, նոր ցաւ դարձաւ: Կարծես թէ՛ որ մենք իմանայինք մեր որդու տեղը, սար ու քար չէինք ընկնի, չէինք գտնի, չէինք բերի տուն: Տաճկի ի՞նչ պէտքն էր թէ մեր սրտից առանց այն էլ արիւն է գնում: Այնքան չարչարեցին խեղճ հալւորին, մինչև անկողին ընկաւ և էլ չվերկացաւ: Հարսը՝ որ վաղուց էր հեռացել անից, գնացել հէրանց, իր սե օրը ողբում: Ինչ անէր խեղճ ջահիլը, օրը մի անգամ անօրէնները դիտմամբ տուն էին թափուում, հարս պահել կը լինէր տանը: Եւ այժմ մենակ էր մնացել Մարթան: Այս սե գիշերին, ամէնից մոռացւած, նա մտածում էր զարհուրելի անցեալի մասին. ներսից սիրաբ ձմլում, քամուում էր: Նա արտասուում էր դառն, յորդ արտասուքներով: Խաւարից ու միայնութիւնից դուրս մի ուրիշ բան կար, որի մասին մտածելիս, քիչ էր մնում սիրաբ պատուի կսկծից: Հարեանները սարսափելի բաներ են ասում... Նրանք իբր թէ կուր են բռնել զախթիաների հետ, և բոլորն էլ... Բայց մայրը չէր կամենում հաւատալ, թէ իր Մինասն էլ նոյնպէս... Նա աշխատում էր չմտածել այդ մասին. թէ բարկացած էր Ասուած. միթէ՛ իրենց քաշածները բաւական չէին...

„Թըրլիկ, Թըրլիկ“ գուռը թակեցին:

Պառաւը ցնցւեց. ո՞վ կարող էր լինել այսպէս ուշ պահուն: Նա մէկ կամեցաւ ճրագը փշելը կծկւելը լուր: Գուցէ հեռանան գնան, ով և լինեն: Իսկ եթէ յանկարծ գուռը կտարնէ և ներս մտնեն խաւար խրճիթը...

Օ՛, այդ զարհուրելի էր, գոնէ ըյս լինէր: „Թըրլիկ, Թըրլիկ“ կրկին թակեցին գուռը, այս անգամ աւելի շտապ, աւելի պինդ, աւելի բարձր: Անհնարին էր լուր: Կարծան վեր կեցաւ կամացուկ, թաթերի վրայ մտնեցաւ գրանը, շունչը պահելով ահանջ դրեց. ո՞չ մի ձայն... Նրա կոկորդը սեղմուած էր, աւտաններն իրար զարկուած երկխղից:

— Ո՞վ ես, վերջապէս սիրտ արեց նա ձայն տալ կամացուկ:

— Ես եմ, բաց գուռը:

— Ախր, ո՞վ ես դու:

— Ես եմ, մարէ. բաց, շուտ բաց:

„Մարէ“, էլ ո՞վ կարող էր լինել „Մինասն է, Մինասն է“, միմնջում էին պառաւի դողդոջուն շրթունքները: Նա շտապ շտապ սկսեց քաշքշել գուռը, որ բաց անի, մոռանալով որ փականքը չի բացել դեռ: Սաստիկ տագնապով բռնւած, նա փոխանակ բանալու գուռը՝ փակում էր. կամ քաշքշում ոնտեղի, մասները տրորում, կտորատում, արիւնտում և գուռը չէր բացուում:

— Բաց, մարէ, շուտով բաց, լուռւմ էր դրսից:

— Բացեմ, քե մեռնեմ, ձէնիդ մեռնեմ, բացեմ. կուրանան աչքերս, ոնց որ կուրացան. լաւ չեմ տեսնում փակը:

Վերջապէս գուռը բացւեց. ներս մտաւ մի երիտասարդ, հրացանը ձեռքին, փամփուշտների երկ ոշաւ բարբ

խաչկապ ձգած ուսերից: Մարթան առանց նայելու վրայ պրծաւ և նրան իր գիրկին առաւ. արցունքները հեղեղեւ պէս թափուում էին աչքերից: Էլ չէր խօսում, այլ համբուրում էր ու հեծկտում, երկար, երկար...

— Խօսիր, լսեմ ձայնդ, արևիդ մեռնեմ, ասաց նա վերջապէս. ասա, ո՛ւր էիր թողել մեզ անտէր-անտիրական. ո՛ւր թողիր սեւաւոր հօրդ, որ դարդամահ էլաւ կան. ո՛ւր թողիր նա նայեց վերջապէս, երիտասարդի քո ցաւից: Ապա նա նայեց վերջապէս, երիտասարդի երեսին և մի բոպէ ստուած կանգ առաւ. յետոյ յանկարծ բոյր թափով յետ մղեց նրան իր գրկից և սարսափած ճչաց.

— Վայ, սեն իմ գլխին, Մինասը չի Մինասը չի հեռու, հեռու ինձանից...

Թորոսն էր...

Շարած, ապշած՝ երիտասարդը յանցաւորի պէս կանգնել էր գլխիկոր, չգիտէր ինչպէս միթիթարէր ծանր թիւրիմացութեան զոհ գարձած այս վշտահար մօրը: շսկայ տղամարդը, որի ղէնքերից մահ էր կաթկաթում, երեսայի պէս շփլել էր այս թոյլ խեղճ կնոջ ստաջ մայրական վշտի վեհութիւնը ընկճել էր նրան:

— Անխիղճ, ո՛ւր է Մինասը. զոյգ գնացիք այն սեգիշերը, այս գիշեր մենակ ես յետ գալիս. ինչ արիւր նրան, կայէն, գոչեց պառաւը կտտաղած, բռնելով և ցնցելով Թորոսի ձեռքը:

— Մարէ, չգիտեմ, կուր բռնեցինք տաճիկների հետ. գիշեր էր, մութ. մենք ցրիւ եկանք, իրար կորցրինք, մարէ, հաւատա՛, չգիտեմ ինչ եղաւ Մինասը. ամենքը փախան զանազան կողմեր, ես էլ այս կողմն եկայ, ետեկցս ընկան, գիւզը շրջապատել են, փնտուում են, ծածկիր ինձ, մարէ, ծածկիր Մինասի սիրուն:

Թորոսը ծածկում էր Մինասի մահը, որ իր աչքով տեսել էր, և նոյնիսկ սրբազան զայրոյթով իր ձեռքով գնդակահար արել նրան սպանողին: Մօր սիրտը շատ շուտ հասկացաւ իր ծանր կորուստը, իր մեծ թշուառութիւնը: Մայրերը չեն խաբուում, երբ զուակն է մեռելը:

— Սպանել են, ճչաց նա. ասում էին, ամէնքն էին ասում, ես սեւաւորս մենակ չէի հաւատում. սպանել են, զո՛ւր ես ծածկում ինձանից, սպանել են իմ ջահիլ-ջիւան կտրիճին: Գո՛ւ, դու տարար անասուած, դու սպանել աւիր, անխիղճ. ինչո՞ւ տարար, ինչո՞ւ խելքից հանեցիր իմ զուակին. տո՛ւր, իմ Մինասին տո՛ւր: Նա կրկին բռնեց երիտասարդի ձեռքը, ցնցում էր, ճչում էր, գոռում խելագարի պէս:

Ասուած է քեզ ուղարկել, որ ինձ հաշիւ տաս. ասա՛, ո՞ւր սպանեցին իմ «աղիզին». ո՞վ սպանեց, ո՞ր անօրէնը, ասա էէ. . . լռում ես. . . Սպանել են, խաբել չես կարողանում, սուտ ասա էլիք, խաբիր ինձ, քարտիրոս մարդ. խաբիր անխելք, ցնդւած պառաւին. ասա՛, որ դեռ իմ արեւը չի խաւարել, ասա՛, որ իմ սու՛նը դեռ չի աւերւել, իմ օջախը չի հանգել, իմ մուխը չի մարել, խաբիր, խաբիր, խաբիր. . . 2է՛ Մինասին խաբեցիր տարար. ի՛նչ եղաւ էն «բլբիւլ լեզուդ», դէ գոնէ ինձ էլ խաբիր, թող սիրտս չճաքի, կամ խանջալդ սիրտս կոխիր, որ մի անգամից հանգստանամ, ճչում էր պառաւը գլխին տալով ձեռները կտրատելով:

— Մարէ, վերւում Ասուած կայ, ես չեմ խաբել ես չեմ տարել մենք երկուսս էլ կամաւ գնացինք, մենք կամաւ կուեցինք թշնամիների դէմ: Շատերն ընկան նրանցից էլ մեզանից էլ թէ ես ընկնէի, մի թէ իմ մայրը Մինասին պիտի անիծէր:

Ահնարկը հասկանալի էր. երիտասարդն էլ չէր ուզում կեղծել տեսներով, որ այդ աւելի է զայրացնում վշտահար մօրը. նա գիտէր, խաբել անկարելի էր:

— Էլ չես ծածկում, սպանել են, ան անգութ. տղամարդ ես, ուժով ես, քաշի գոնէ այս աւերակի սիւնը, թող կտուրը գլխիս ընկնի. ասաց պառաւը, յետ յետ քաշեց, գնաց խրճիի հակառակ կողմը, կպաւ պատին, կծկեց, մնաց մի քանի րոպէ: Ապա յանկարծ կանգնեց, ձգեց բոլոր հասակով դիմեց դէպի շարած Թորոսը՝ գոչելով:

— Իսկ դո՛ւ, քեզ չսպանեցին. ինչո՞ւ ես եկել, եկար որ էլ ո՛ւմը խելքից հանես. այստեղ, իմ այս բնի մէջ ի՛նչ ես փնտռում, էլ ի՛նչ թողիր ինձ, մնաց չոր սեւաւոր գլուխս, ի՛նչ ես ուզում ինձանից, ինչո՞ւ չես թողնում, որ մենակ ճչամ, ճաքեմ, ինչո՞ւ չես հեռանում աչքիցս, որ գոնէ քեզ կենդանի չտեսնեմ: Թող մնամ մենակ, մենակ, թող չորանամ այս ծակի մէջ. ի՛նչ ես ուզում ինձանից:

— Մարէ, մի գիշերւայ ապաստան, Մինասի սիրո՛ւն:

— Ապաստան. . . ապաստան. . . կրկնեց պառաւը գոթխային հեգնութեամբ, խելագարի ժպիտով քե՛զ ապաստան, որ ապրես, կեանք ու արեւ տեսնես. չեմ կարող չեմ կարող իմ ուժից վեր է. գնա՛, գնա՛, անասուած, թափառիր Կայէնի պէս. թո՛ղ իմ որդու դահիճները քեզ էլ հաղար կտոր անեն, թող քո մայրն էլ ինձ պէս արիւն-արցունք թափի. թող քո կինն էլ իմ հարսի պէս սե ձգի գլուխը, թո՛ղ ողջ աշխարհն արտասուի և սուգ անի, սե հագնի, երբ էլ չկայ Մինասը: Գէ՛, գնա՛. չես գնա, ես դուրս կերթամ, ես կը ճչամ գիւղովը մէկ, թէ «եկէք, այստեղ է իմ որդու մահուան պատճառը, եկէք»:

Պառաւն անողոր էր. ժամանակը թանկ: Թորոսը
տեսաւ, որ այդպէս երկար մնալ չի կարելի, որ մի
վճռական բան պիտի աներ:

— Գու մի գնա, մարէ, ստաց նա դառնութեամբ.
ես կ'երթամ, և թո՛ղ ինձ սպանեն. քո որդու դահիճ-
ները: Թո՛ղ իմ մայրն էլ արտասուի, եթէ դա կարող
է .բեղ մխիթարել, թո՛ղ իմ կիներն էլ սև ձգի, եթէ
.քո հարսի սևը կը վերանայ դրանով: Ես կարծում էի,
թէ իմ թշառ ընկերոջ մայրը իր մեծ վշտի մէջ դոնէ
մի փոքր կը մխիթարէի օգնելով նրան, որի ձեռքը իր
որդու մահաւան վրէժէն առաւ և որ իր կեանքի մնա-
ցորդը պիտի գործ գնի անընդհատ թափելով նրա
թշնամիների արիւնը, և այսպէս պիտի վառ պահի նրա
յիշատակը, որովհետեւ այսպէս էր նրա կամքը: Բայց
այժմ տեսնում եմ, որ սխալած եմ եղել. դէ՛հ, որ
այդպէս է, ևս դուքս կ'երթամ, մարէ, դու հանգիստ
մնա, թո՛ղ սպանեն ինձ էլ, միայն թէ դու մխիթարելի:
Բայց գիտցիր, որ դրանով դու Մինասի ոսկորների յա-
ւտենական հանգիստն ևս խռովում:

Ըսաց Թորոսը, վերցրեց .բիշ առաջ պատին յենած
իր հրացանը, նայեց բլթակին, շոշափեց, նայեց իր
փամփուշտների շարքերին, և իր բազկին ու զէնքին
սպաւինած, նա համարձակ քայլերով շարժեց դէպի
դուռը, լծափով քաշեց սողնակը և դուռը բացեց:

— Կո՛ց, ճչաց յանկարծ Մարթան սարսափած, զգա-
լով, որ ինքը մի սոսկալի ոճիր է կատարում, երբ նա
դուքս էր գալիս դռնից. կո՛ց անխիղճ, մի գնա. —
պառաւը վաղեց գէպի դուռը, յետ .քաշեց Թորոսին,
փակեց դուռը կրկին:

— Մի գնա, սևը թո՛ղ միայն իմ գլխին գայ, թո՛ղ

միայն ևս արտասուեմ: Թո՛ղ իմ տունը միայն աւերւի.
կո՛ց, Մինասի մայրը չի կարող նրա ընկերոջը անօ-
րէնների ձեռքը տալ, չի կարող այս չար ժամին տա-
նից դուքս անել...

Մի .քանի րոպէ պառաւը մնաց լուռ: Նա մտածում
էր...

Ըսաւ նա շտապ շտապ, խելագարի շարժումներով,
քանդեց ծալքը, դուքս քաշեց նրա սակից իր հարսի
մի ձեռք զգեստը, և փութով հագցրեց Թորոսին,
փաթաթեց նրա գլուխը կանացի ձեռով վերցրեց հրա-
ցանն ու փամփուշտները, ցրեց փուշտ անկողնի մէջ,
ծածկեց, իրան էլ հրամայեց մտնել այդ անկողնի,
նստել, թէ մարդ գալու լինի՝ գլուխը քաշ ձգել և
ձեռացնել, թէ իբր արտասուում է, առանց վերեւ նա-
յելու: Թորոսը լուռ հնազանդեց:

Գիւղամիջից լուում էր սոսնձայն, ազմուկ, խօսակ-
ցութիւն: Չայները մօտեցան կամոց կամաց: Գուռը
թակեցին: Ոստիկաններն ու գիւղի ոէսը շրջում էին
տանից տուն, փնտռում էին Թորոսին, ամէնքը գիտէին,
որ նա փախաւ, գիւղում ծածկեց: Պառաւը ճրագը
ձեռքին մօտեցաւ, դուռը բացեց. մի խուճի գնեւած
մարդիկ ներս թափեցին, նայեցին ամեն կողմ, քանդե-
ցին ծալքը, նայեցին թոնիրը ի զուր, ոչ որ չկար:
ցին ծալքը, նայեցին թոնիրը արտասուող հարսին. նա
Յիսնասպաւը երկար նայեց արտասուող հարսին. նա
մտածում էր, միտքը չար էր. եթէ Թորոսին շուտով
գտնելու հաստատ յոյս չլինէր, մտածեց նա, արժէր
մարդկանց դուքս ուղարկել և մի փոքր մնալ այստեղ...
բայց... նա ձեռքով շարժում արեց, դուքս եկաւ, որսը
թողնելով ուրիշ անգամի:

Միւս օրը երեկոյեան, երբ կրկին խաւարն իջաւ երկրի

վրայ, երբ գիւղը լռեց ու քնեց, պառաւը կանչեց
Թորոսին.

— Ա՛խր որդի, երէկ ես քեզ անիծեցի, այլեւձ էր
սիրտս. մն՛յր եմ... սե գայ տանի ինձ պէս մօրը, ի՛նչ
հողը տամ գլխիս... նա կրկին հեկեկաց. այժմ նրա
փոխարէն օրհնում եմ քեզ, որ իմ Մինասի սրտովը
լինի...

Արտասուքները այլևս խեղդեցին դժբախտ մօր
ձայնը... Թորոսը կռացաւ համբուրեց նրա ձեռքը,
ինչպէս կը համբուրէր իր մօր ձեռքը, և յուզւած
դուրս գնաց, տանելով ճակատի վրայ պառաւի լուռ, բայց
ջերմ համբոյրի հետքը...

Դուրսը դեռ խաւար էր, բայց արշալոյսը հեռու չէր...

ԱՐԻԻՆՈՏ ԹԹԽՄՈՐ

Առաւօտեան դաւիթը ժամ գնաց, իսկ Նարգիզը
վեր կացաւ, երեխաներին զարթեցրեց, ուղարկեց գոմ
և պատրաստուում էր թոնիրը վառելու:

Տան դուռը ճռճոյով բացեց և ներս մտաւ մի եօթ
տարեկան աղջեկ՝ հարեւաննեց Սօփին: Նա ձեռին բըռ-
նած ունէր խմորի մի գունդ՝ մի թթխմոր: Նարգիզի
թթխմորն էր այն, որ նախորդ երեկոյ տարաւ Սօփին,
որովհետեւ իր մայրն այսօր հաց պիտի թխէր: Բայց
ինչո՞ւ էր յետ բերում այժմ, զարմացած մտածեց Նար-
գիզը. այսպէս վաղ հացը թխած չէին կարող լինել
օրւայ այս ժամին դեռ թոնիրն էլ չեն վառում:

Մինչ այդ՝ Սօփին կամացուկ, ասես վախով խելով, մօտեցաւ
Թոնրան շուրջը պատող թմբին և անվճռական ձայնով ասաց.

— Ի՞նչ էր թթխմորը, Նարգիզ բաջի:

— Աղջիկ, ձեր հացը ե՛րբ թխեցիք վերջացրիք. դեռ
լոյսը նոր է բացւում:

— Դեռ չենք թխել:

— Հապա ինչո՞ւ բերիր թթխմորը:

— Մայրիկս ասաց՝ տար յետ տուր:

— Ինչո՞ւ:

— Չեմ իմանում... Է՛ն ժամը չեմ իմանում, պատաս-

խանեց Սօփին գլուխը քաշ ձգած, ոտքերին նայելով սակայն իր երգումը նա այնպիսի եղանակով ասաց, որից պարզ երևում էր, թէ նա բան գիտէ, բայց հրամայւած է ոչինչ չ'ասել: Նարգիզն այդ շատ լաւ գգաց երեխան անյաջող էր կեղծում:

— Աղջկ, ուրիշ անղնց թթխմոր բերիք:

— Ուրիշ անղնց... Հո՛, բերինք. Այմօնեց թթխմորը բերինք. մայրիկս բերեց... ևս բերեցի. ասաց՝ գնա՛ բեր, բերեցի... խմոր արինք. շատ կնք խմոր արեր:

— Սօփի, ինչի՞ մեր թթխմորով չ'արիք խմորը:

— Չեմ իմանում... ևս ի՛նչ գիտեմ. մայրիկս ասաց... մայրիկս ասում էր՝ Նարգիզ բաջկեց թթխմորը լաւը չի՛. Նարգիզը մոայլեց. այստեղ մի բան կար. այս երեխան գեո էլի բան գիտէր, իսկ ինչ որ գիտէր, լաւ բան չէր լինելու. «Յիսուս Բրիտանոս», մումնաց Նարգիզը:

— «Թթխմորը լաւը չի՛», շարունակեց Նարգիզը՝ շրթունքները կծոտելով. մեղայ քեզ, Ասուած, ո՞վ էր լսել՝ «Թթխմորը լաւը չի՛»... Աղջկ, ինչպէ՞ս թէ թրթխմորը լաւը չի... թթխմորն էլ լաւ չի լինի՛...

— Չեմ իմանում... մայրիկս ասում էր՝ ձեր թրթխմորը հարամ է...

— Աղջկ գժւել ևս, թէ՛ մերզ է գժւելք. քո ծամն էլ կարեմ, քո մօրն էլ մեր թթխմորն ինչո՞ւ էր հարամ լինում. արունք ենք արել ի՛նչ է, սևա՛ւոր:

— Չեմ իմանում... մայրիկս ասում էր՝ ձեր թրթխմորը արիւնոտ է, ուտել չի լինի... ասում էր... — և աղջկը դարձեալ ինչ որ մումնաց, շարունակ ոտքերի տակը նայելով և թթխմորը ձեռքին, բայց Նարգիզը լաւ չլսեց. սակայն նրան թւաց, որ այդպէս միամտութեամբ ասած բառերը պէտք է աւելի սարսափելի

լինելին, քան ինչ որ լսեց. ուտի ճչաց սաստիկ կատաղած.

— Աղջկ, ի՛նչ ասիր...

Երեխան այդ ճոցից վերեւ նայեց, տեսաւ Նարգիզի կատաղած դէմքը, սաստիկ վախեցաւ, շրթունքները գողացին և արցունքները կախւեցին աչքերից. նա հեկեկաց. Նարգիզը մեղմացաւ.

— Սօփի, մի՛ լաց, էն ի՛նչ ասացիր, չլսեցի. մայրիկդ ի՛նչ էր ասում:

— Չեմ իմանում, պատասխանեց աղջկը լացի միջեց և կցկտուր. մայրիկս ասում էր... էն մարդերին... էն օրը... ախպէր Գաւիթն է մասնել, սպանել աւել... ասում էր, ձեր թթխմորը արիւնոտ է... ասում էր. մեղք է նրանով խմոր անել... ևս, ի՛նչ անեմ, բա՛ջի, մայրիկս ասաց, խալխն են ասում, դուքան են ասում, մայրիկս ասաց, աւելցնել Սօփին, նկատելով, որ Նարգիզի շտապեց աւելցնել Սօփին, նկատեց և շրթունքները ծամուեցին. դէմքը կրկին կապտեց և շրթունքները ծամուեցին. մայրիկս ասաց՝ տար տուր, ևս էլ բերի, հը՛, գնեմ այստե՞ղ, բա՛ջի, հաս...
Բայց Նարգիզն էլ չէր լսում: Աղջկայ ձայնը հնչում էր նրա ախանջին ինչպէս մի անորոշ բզոցոց. նա լուռ էր. աչքերը լայն չուած, նայում էր այդ աղջկան, որ թթխմորը ձեռքին կանգնել էր նրա առաջ՝ գողալով երկիւղեց... Հարւածը սարսափելի էր. ի՛նչ անել, բռնել այդ աղջկան, թոնրի մէջը կոխել վառել, թէ՛ դուրս վազել նրանց տուն գնալ և մօր ծամերը փետել գլխին: Ահա թէ ի՛նչ էր մտածում Նարգիզը, երբ Սօփին արտասանում էր իր վերջին խօսքերը:

Մինչ այդ՝ աղջկը դրեց թթխմորը թմբի վրայ և շտապով դուրս գնաց դռնից:
Նարգիզը մնաց մարերի ծովն մէջ... Այն ի՛նչ ասաց

Սօփին: Երկու շաբաթ առաջ էր այդ լաւ էր յիշում
 Նարգիզը — և ո՞վ կը մոռանար այդ դժոխքի օրը, —
 տաճիկ զինւորները յանկարծ պաշարեցին ջրատար
 Յունօյի տունը, ուր մի քանի զարիք մարդիկ կային:
 Սարսափելի կռիւ տեղի ունեցաւ. տանեցիք ջարդեցին,
 Յունօն իր զաւակների հետ սպանեց, կինը տարան,
 սունը կրակի տւին, և էլի ուրիշ քանի մարդ սպանեց:
 Ասում էին, որ գիւղացիներից մասնող է եղել Նարգիզը
 ինչ այրած սրտով անիծում էր մատնողին, բայց միթէ՞
 այդ մատնիչը, այդ արնպարտը, այդ հոգին կորցնողը
 Գաւիթն է, իր ամուսինը, և այն ծով արիւնը իր զա-
 վակների վզին է ընկնում: «Սօփին ասաց, մայրն է ասել,
 դրսում ասում են, ասում են, ասում են... Թ.Թ.Թ.Թ.Թ.
 իր տեղումն էր. Նարգիզը չէր կարողանում նայել խմորի
 այդ հասարակ գնդին: Սօփին ասաց հարամ է, արիւնտա
 է, մտածում էր նա. իսկ եթէ ճիշդ է, ինչո՞ւ էր բար-
 կանում:—Նա նստած մնաց իր տեղում. թոնիր վառելը
 մոռացաւ. ցանը մնաց թմբի վրայ: Բոլոր աներից ծուխը
 բարձրանում էր, Նարգիզը հերթիկից ոչինչ չէր գուրս
 գալիս: Նա սպասում էր. դուրսիցն անտանելի էր:
 գոնէ Գաւիթը շուտ տուն գար՝ կամ ցրէր այս սև
 կասկածը, կամ մի փոս փորէր, թաղէր իրան: «Ժամ
 գնաց»... մոմօաց Նարգիզը թունտա հեգնութեամբ.
 «աղօթում է»...

Երկար ու ձիգ ըրպէնք անցան... Վերջապէս բակում
 լուեց Գաւթի ոտնաձայնն ու սովորական հաղը: Նար-
 գիզը ցնցեց այդ հաղըն, ինչպէս օձի խայթոցից. նա
 և շտապում էր տեսնել Գաւթին և դողում էր վճռա-
 կան ըրպէից՝ ինչպէս կախաղանի դատապարտած
 մէկը:

Գաւիթը տէր-ողորմեան համբերով ներս մտաւ հան-
 դարտութեամբ, առանց կնոջը նայելու, սուս ձգնաւորի
 երկիւղած քայլածքով մօտեցաւ հացի տաշտին, գուրս
 քաշեց այնտեղից մի կողր հաց—մի բիւլում — հան-
 դարտութեամբ գրպանը դրեց և պատրաստուում էր
 գնալ Եղօնց սաբուն՝ ըստ իր սովորութեան նախաճաշ
 անելու, մինչև որ կինը թոնիրը կը վառէր կը վերջա-
 ցնէր: Նարգիզը լուս հետեւում էր նրա շարժումներին,
 նայում էր դէմքին, որից ոչինչ հասկանալ կարելի չէր,
 նայում էր աչքերին, որոնց կոպերից կախած էր գեռ
 ևս երկիւղածութեան նման մի բան: Երբ ամուսինը
 պատրաստուում էր դուռը բանալ, Նարգիզը ձայն
 տւեց.

— Այն ինչ դրիր ջէբդ:

— Հաց է, ինչ է, զարմացած պատասխանեց Գաւիթը:

— Ո՞ւր ես տանում:

— Խենթ ես ինչ է, այ կնիկ. տանում եմ ուտեմ,
 ո՞ւր եմ տանում:

— Արիւնտա հացը կուտուի...

Գաւիթը գունատեց. նրա դէմքը վայրկենապէս այլ-
 այլեց, երկիւղածութիւնն ու խաղաղութիւնը կորան...
 Թէև նա իսկոյն աշխատեց հանդարտել, առհարկի
 հանդարտութիւն և անտարբերութիւն ձևացնել, սակայն
 արդէն ուշ էր: Նարգիզը յիմար չէր, նրա փորձող հայեացքը
 մինչև իր ամուսնու հոգու խորքն իջաւ ու այնտեղ սև
 դժոխք գտաւ. իրուր էր խափում Գաւիթը: Նարգիզը
 սոսկաց իր գիւտից. նա դժբախտ էր, նա դողում էր
 ոճրից, դողում էր թափւած արեան առաջ, դողում էր
 իր զաւակների, իր օջախի համար: Նա գլուխը քաշ
 ձգեց, երեսը ծածկեց ձեռներով, և զսպած բարկու-

Թիւնն ու վիշաք դուրս թափւեցին յորդ արցունքնե-
րով: . . . Անոջ յուզմունքը ևս առաւել շփոթեց Պաւլոսին,
և երբ կինը կրկին վերև նայեց, Պաւլոսը գունատուած
էր ինչպէս թուղթ ու մի ձեռքը գրպանում՝ ջղոտ
անհասկացածեամբ շարժում էր հացը: Բայց և այնպէս
նա փորձեց պաշտպանել: նա վերջին ճիգն էր գործ
դնում:

— Կնիկ, երա՞ց ես տեսել ի՞նչ ես դուրս տալիս:
արիւնս ո՞րն է, ես ի՞նչ արունք եմ արել: . . .

— Ո՛ւր էր թէ երա՞ց լինէր, սեւաւոր մարդ. երազե
արիւնը բախտ է ցերեկին, իսկ այդ բախտը կարեւր
մեր տնից. տես. . . — նա ցոյց տւեց թմբի վրայի թըթ-
խմորը: Պաւլոսն ապշած նայում էր խմորին առանց
բան հասկանալու, իսկ կինը շարունակեց այս անգամ
աւելի ցաւով՝ քան զայրացած:

— Մեր տունը արիւնով լցած է, սեւաւոր մարդ,
մեր թթխմորը հարամ է, մեր թթխմորը արիւնոտ է,
հարեւանները մեր թթխմորով էլ չեն ուղում հաց
թխել բերին յետ տւին: Դէ թո՞ղ սեղ քալ մեզ տանի,
էլ ինչ՞ ենք ապրում, Յուդայի և Վայէնի տուն շինեցիր
մեր տունը, մարդ. թո՞ղ Վայէնի կ օ տ օ շ բունի
դլելիդ: . . .

Պաւլոսն այժմ հասկացաւ. . . Խօսք չ՞ուներ, բերանը
փակեց. կինը կրկին արտասուեց, ուստի նա բարեւոր
համարեց շուտով դուրս գնալ տնից դէպի սաքուն:

Գիւղամիջից անցնելիս նա աշխատեց իր սովորական
իշխանական եղանակով քայլել, խրոխտ, հանդարտ, բա-
րեպաշտ դէմքով և երբեմն երբեմն հաղալով: Եղօտեց
գոմին հասաւ: Գրսից լսում էին խօսակցութեան
ձայներ. երևում էր, որ սաքուն լեքն է գիւղացիներով:

Պաւլոսը դուռը բացեց և ներս մտաւ, աշխատելով
չկորցնել իր ձեւերն ու սառնարիւնութիւնը: Նրա ներս
մտնելու հետ ձայները մէկէն դադրեցին և նա շփոթւեց.
նոյնիսկ նրան թւաց, թէ իր լսած վերջին բառերը նոյնն
էին, ինչ որ կինն ասաց, — «Թթխմորը հարամ է,
արիւնոտ է»: Պաւլոսն իրեն չստելու դրեց և առհարկի
վստահութեամբ ասաց՝ «Ողորմի՛ Աստուած»: Զայնն աւելի
բարձր դուրս եկաւ, քան հարկաւոր էր. գոնէ Պաւլոսն
այսպէս թւաց, և նա այնպէս փակեց բերանը, կարծես
մէկը ապտակով խփեց շրթունքներին: Այդ էլ վնաս
չուներ, սարսափելին այն էր, որ իր «ողորմի Աստուած»-ին
ոչ որ չպատասխանեց: Այդ էլ չնկատելու տւեց Պաւլոսը
և առաջ գնաց իր սովորական տեղը գրաւելու բու-
խարիկից դէպի ձախ, երկրորդ տեղը՝ հաստաբեխ Մա-
նօյի և Խուս-Հովէյի մէջ:

Գիտամբ արդեօք թէ՞ անուշադրութիւնից՝ այսօր
այդ երկու մարդի մէջ շատ քիչ տեղ էր մնացել նրա
համար, և երբ Պաւլոսը մտնեցաւ, ոչ մէկը չշարժւեց:
Պաւլոսը մի կերպ ներս սողոսկաց, նստեց: Լուութիւնը
շարունակում էր. դիտամբ չէին խօսում թէ՞ խօսել
չէր լինում: Մօտիկ հարեւաններն էլ երեսները դարձրել
էին Պաւլոսից: . . .

— Ժամում շատ ցուրտ էր. տէրտէրը աղօթքները
բօլ կուլ տւեց, — ասաց Պաւլոսը: Ոչ որ ձայն չհանեց.
լուութիւնը շարունակեց. խօսակցութիւն սկսելու նրա
ջանքերն ապարդիւն անցան:

Պաւլոսը հանեց չիբուխը, պատրաստեց. ոչ որ կրակ
չառաջարկեց նրան. ինքը կրակը վերցրեց, վրան դրեց
և սկսեց արագ արագ ծխել: Յանկարծ Մանօն նրա
կողքից վերկացաւ և դուրս գնաց: «Ինչո՞ւ, մտածեց

Գաւիթը նա այսպէս շուտ չէր գնայ: Քիչ յետոյ նրան հետեւեց Խուս-Հովէն: Այդ արդէն աւելի տարօրինակ էր: Գաւիթը կծկւեց և ողնաշարի երկարութեամբ մի պաղ բան սողաց դէպի վար: Այժմ նա աւելի արագ արագ ծխել սկսեց, և ծուխը քուլայ-քուլայ բարձրանում էր: Նա գլուխը քարշ էր ձգել և նայում էր չերուսիին. մէկ էլ վերև նայեց, և նրա աչքին մի սարսափելի տեսարան ներկայացաւ, — գիւղացիք իրար յետեւից դուրս էին փախչում սարուից, ուր կարծես վարակիչ ախտ էր բուռն դրել: Գաւիթը ծխելը մոռացած՝ աչքերը չռած նայում էր նրանց, և մէջքի պաղ գիծը լայնանում էր, հա՛ լայնանում: Նա մտ էր մրսելու: Աւելի սարսափելին այն էր, որ իւրաքանչիւր գիւղացի դուրս գալուց առաջ մի թունոտ, արհամարհական հայեացք էր ձգում նրա վրայ, որից նրա արիւնը սառում էր երակներին մէջ, և Գաւթին թւում էր, թէ ինքը նրանց չի ճանաչում, օտար է. այն աստիճան դէմքերը փոխւած էին, խորթ էին:

Սարուն դատարկեց իսպառ: Գաւիթն այժմ էլ կասկած չուներ. իր մասնութեան մասին գիտէին ամէնքը: Սարուն այժմ իր լուութեամբ սարսափելի էր, արհամարհ: Բայց ո՛ւր գնալ: Տո՛ւն... Նարգիլն այնտեղ արտասուում է արիւնոտ թթխմորի առաջ: Եւ նա մնաց անշարժ նստած, աչքերը յառած այն պատի ճեղքին, որտեղից մի ճպուռի ողբաձայն միակերպ ճռճոոցն էր լսում. նայում էր և չէր մտածում... Երկար ժամեր անցան... Յետոյ Գաւթին թւաց, թէ ինքը՝ ինքը չէ, թէ գիւղացիների հետ ինքն էլ դուրս է գնացել. խօս՝ այստեղ մենակ չէր նստի ճպուռին ականջ դնելու: Իր ապշուածեան մէջ այս միտքը նրան դուր եկաւ, մխիթարեց նրան.

բայց ո՞վ էր ինքը. — այդ հասկանալ չէր կարողանում: մտածում էր, մտածում իր ընդարմացած ուղեղով: Այդ դրութեան մէջ նա ձեռքը մէքենաբար գրպանը տարաւ, հացը դուրս քաշեց, նայեց. սոված չէր. մի բան անելու համար հացը դէպի բերանը տարաւ ու կրծեց և կրկին յիշեց թթխմորը, արիւնոտ թթխմորը. չէ՞ այս հացը նոյն թթխմորից էր, համն էլ տարօրինակ էր... Նա ծամել չկարողացաւ և սարսափով զգաց, որ այդ հացի պատառն իր բերանում ասես աճում, մեծանում է, սղմում է կոկորդը, խեղդում է նրան: Գաւիթը շտապով հանեց բերանից պատառը և ձգեց հեռու... .

Գոմի լուսթիւնը աւելի և աւելի ճնշող էր դառնում: Դուրս փախչել էր հարկաւոր, բայց ո՛ւր. այդ նա չգիտէր. միայն թէ դուրս, լայն տեղ, բաց երկնքի տակ: Եւ նա ոտքի կանգնեց, թողեց հացը և սրտապատառ դուրս փախաւ գոմից առանց յետ նայելու... .

Մինչև երեկոյ խելացնորի նման դաշտում թափառելուց յետոյ, նա քայլերն ուղղեց դէպի գիւղը: Բայց յանկարծ, խաւար փողոցի մէջ հազիւ մի քանի քայլ արած, նրա առաջ ցցեցին երկու խորհրդաւոր մարդիկ: Գաւիթը ճիչ անգամ չարձակեց, երբ մահացու զէնքի փայլը տեսաւ խաւարի մէջ և երբ զգաց երկաթի պաղ ծայրն իր կրծքին: Արդարութիւնը իր իրաւունքն էր պահանջում... .

Միւս առաւօտ գիւղացիք գտան նրան փողոցում գաշոյններով խողխողւած:

Մի գիակ փողոցում և մի հաց սաքում, երկուսն էլ անախորժ գիտեր էին գիւղացոց համար. դիակը՝ դաւաճանի էր, հացը՝ հարամ: Մի խոր փոս փորեցին, արիւնոտ դիակը դրին փոսի մէջ, հարամ հացն էլ թա-

դեցին հետը,—Թթխորը արիւնոտ էր, ուտել չէր լինի:


—

Ամէն առաւօտ գիւղի յերգիկներից ծխի պտոյտները, որպէս թանձրացած սև հոգսեր ու ցաւեր, ձգուում են դէպի վեր, դէպի երկինքը և բոթերով բեռնաւորած բանբերների պէս վազում են կապուտակ անսահմանութեան մէջ զարհուրելի բաներ են պատմում և կարծ ս հաշիւ ու համար պահանջում անարդար երկնքից: Միայն Դաւթի խրճիթից ծուխ չի բարձրանում: Այդ խրճիթը երկնքից պահանջ չ'ունի, այդ խրճիթը պատմելիք չ'ունի. նա կարծես կամենում է լռել և ծածկել երկնքից այն մեծ ոճիրը, որ իր յարկի տակ է մտածւած: Այն սև օրից սկսած նարգիզն ուխտ է արել մի ամբողջ տարի էլ թոնիր չվառել. էլ հաց չթխել իր արիւնոտ թթխորով, իր արնպարտ օջախում: Առաւօտեան այն ժամին, երբ հարեանները կրակ են ձգում թոնիրները, նարգիղը վերցնում է իր երկու որբերը, գնում է եկեղեցի, չորում է խոնաւ գեանին երեսանների հետ, դառն արցունքներով թրջում է եկեղեցու յատակը և աղօթում է, աղօթում... Ո՞ւմ համար է աղօթում նա. իր ոճրագործ ամուսնու հոգու փրկութեան, թէ՛ իր զաւակների և իր օջախի վրայից արիւնը վերցնելու համար, — այդ միայն ինքը գիտէ: Երբ նա եկեղեցուց տուն է վերադառնում, բարի հարեանները նրա օրւայ պաշարը բերած են լինում իրենց արդար հացից...

Երբեմն երբեմն երեսանները զարմացած հարցնում են ձորը.

— Մայրիկ, ինչո՞ւ հաց չես թխում:

— Թթխորը չկայ, ձեզ մեռնեմ, մեր թթխորը արիւնոտ է, պատասխանում է մայրը, և զսպւած արցունքները թափւում են աչքերից կաթիլ-կաթիլ: Եւ նայում են մանուկները խորը վշտով՝ երկար, երկար, և մտածում են, մտածում, բայց նրանց փորրիկ գլուխները չեն կարողանում հասկանալ թէ ինչո՞ւ է արտասուում մայրը և ինչո՞ւ է թթխորն արիւնոտ...



5535

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to its orientation and fading.



2013

Գ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԿՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ապստամբական ոգի (սպառնալուծ)
2. Յեղափոխական կեանքից (սպառնալուծ)
3. Գաղտնի տպարան (սպառնալուծ)
4. Գիտական սօցիալիզմ, Փ. Էնգելս
5. Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր
6. Կուկուլենեանի խմբի արշաւանքը
7. Կարնոյ յիշատակին (չորս հատուած)
8. Հ. Յ. Դաշնակց. ծրագիր (արեւմտ. բառ.)
9. Homo homini lupus, Գրքիջներ, Վարդգէս
10. Երիտասարդներին, Պ. Կրապոտկին
11. Ազատութեան ճնպրհին. Ղարիբ, Ա. գրքոյկ
12. Ազատութեան ճնպրհին. Ղարիբ, Բ. գրքոյկ
13. Ամբոխային տրամաբանութիւն
14. Ազատութեան ճնպրհին. Ղարիբ, Գ. գրքոյկ

„Դրօշակ“-ի խմբագրատանը ծախուում են նաեւ՝

- 1) „Սօցիալիզմ և սօցիալական շարժումը
19-րդ դարում“, Վ. Զօմբարտ
 - 2) Պատկերներ (մեծագիր) Պետոյի, Բարկէն
Սիւնիի և Սերոբի: Հատը
 - 3) Փոստ կարտեր հայ հերոսների նկարներով:
Հատը
- Փոստ կարտերի հաւաքածուն (10 հատը)
10 ֆրանքից աւելի գնողներին զեղջ.

Գրքոյկները ևւ բաց-նամակները ստանալու համար դիմել

Rédaction du „Droschak“, Genève (S)